

Ո. ՊԱՏՎԱՆՅԱ Ե ԱՐԵ

Չ Ա Խ Ա Խ



K U S M O S Z R U S

891.99

7933

7-25 Minneapolis, D.

Quinn

3p

16 ~~x~~

2.30

891-55-95

Դ-25

Ռ. ՊԱՏՎԱՆՅԱՆ

ՍՏՈՒԴԻԵՍ է 1901 թ.

Չ Ա Խ Ո Ւ

(Զրկիր Մարտիրոսի պատմածը)

Նոր Նախիջևանի բարբառից
փոխադրեց Ա. Լիսիչյան

4933

11
29219



ՀԱՅԹԵՏՐԱՍ

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆ

1946

Շապիկի նկարը և իլուստրացիաները

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Р. ПАТКАНИЯН

Карманный нож

(на армянском языке)

Армгиз 1946 Ереван

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830—1892)

1850—51 թվերին, Թիֆլիսում լույս տեսնող «Արարատ» շաբաթաթերթում տպագրվեցին 20-ամյա Ռափայէլ Պատկանյանի առաջին ուժանավորները։ Այդ թվականներին Պատկանյանը դեռևս բարձրագույն կրթություն չուներ։ Նա ծնվել է Նոր-Նախիջևանում (1830 թ.), սկզբնական կրթությունն ստացել իր հոր՝ Գաբրիէլ Պատկանյանի դպրոցում, ապա 1843—49 թվականներին սովորել Մոսկվայի Լազարյան ճեմարանում։ Նա լավ գիտեր դրաբար լեզուն, հիմնավորապես ծանոթ էր հին և միջին դարերի մեր հարուստ գրականությանը, նրան հարազատ էր ոռուաց լեզուն և պրականությունը, գիտեր նաև եվրոպական լեզուներ, սակայն, այս ամենը քիչ էին մեր ժողովրդի մեծ գրականության մեջ աշխարհի ընկնող դեր կատարելու համար։ Պատկանյանը գիտակցում էր այս։

1851—52 ուսումնական տարում նա սովորում է Գործադի Համալսարանում, սակայն, նյութական անբարենպաստ պայմանների հետևանքով, ստիպված է լինում թողնել ուսումը։ Միայն, 3 տարի անց, Պատկանյանը վերսկսում է իր ուսումը Պետերբուրգի Համալսարանի արևելյան բաժնում, որը ավարտում է 1860 թ. արևելյան լեզուների թեկնածուի աստիճանով։

50-ական թվականների հենց սկզբին, այնպես հաջողակ սկսած Պատկանյանի գրական գործունեությունը, նրա ուսանողական տարիներին, նոր թափ ու ծավալ է ստանում։ Ստեղծելով «Գամառ Քաթիպա» գրական ընկերությունը, Պատկանյանը եռանդագին պայքար է ծավալում հանուն նոր գրական լեզվի և աշխարհիկ գրականության։ Այդ միջոցին են գրվում և լույս տեսնում հեղինակի մի շարք լավագույն բանաստեղծությունները, այդ թվում նրա հոշակավոր «Արաքսի արտասուրբը»։

Պատկանյանի այդ շրջանի գործունեությունը չափազանց բազմազան է։ Պոետական սքանչելի երկերի կողքին, նաև ստեղծում է դասադիրք հայ դպրոցականների համար, նաև կազմում է իր հոչակավոր «Ազգային երգարանը», թարգմանում է «Մոբինգոն Կոռուզո» հայտնի վեպը, գրում է «Պետրոս Մեծի» պատմությունը, կազմում և հրատարակում «Գամառ Քաթիպա» գրական ընկերության նշանավոր տետրերը, հրատարակում «Հյուսիս» շաբաթաթերթը ու այս բոլորը լույս ընծայում իր սեփական տպարանում, ստեղծած աղքատ ուսանողի սուղ միջոցներով։

1867 թվականից ի վեր, Պատկանյանը թողնում է Պետերբուրգը և մեկ ընդ միշտ հաստատվում Նոր-Նախիջևանում։ Այստեղ նա մի քանի տասնամյակ շարունակաբար նվիրվում է նոր սերնդի կրթության և դաստիարակության գործին։ Սակայն, մանկավարժական աշխատանքներին զուգահեռ, Պատկանյանը, նոր, աճող եռանդով, շարունակում է գրական ստեղծագործությունը։ Այս շրջանին են վերաբերում Նոր-Նախիջևանի բարբառով գրված նրա արձակ և շափածո երկերը, որոնք հայ երգիծաբանական գրականության մնայուն գործերից են։ Այս շարքի մեջ լավագույններից մեկն է «Չախու» արձակ գրվածքը։

«Չախու» մի սրտառուշ պատմություն է այն մասին, թե ինչպես, նախկին կապիտալիստական հասարակության մեջ, զոհ է զնում բացառիկ ընդունակություններով օժտված մի շքավոր պատանի։

Անձնվեր հայրենասիրություն, — ահա այն գաղափարական և բարոյական հիմքը, որի վրա բարձրանում է Ռաֆայել Պատկանյանի ողջ ստեղծագործությունը, անկախ նրանց ժանրային և ոճային առանձնահատկություններից, անկախ այն բանից, թե այդ երկերը մեծերի համար են գրված, թե փոքրերի, արձակ են, թե շափածո, երգիծաբանություն են, թե լուրջ գրվածքներ, հոդվածներ են, թե նամակներ։ Սրանով է Ռ. Պատկանյանը արժանացել ազգային մեծ բանաստեղծի փառքին, դրա մեջ է նրա մնայուն և կենդանի արժեքը այսօրվա և վաղվա սերունդների համար։

ՀՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ



Գարունը դեռ հասած չէր, բայց էն տարին շոքը էնպես վաղ էր կոխել, որ փետրվարի տասնեհինգինքանին արդեն դալար արոտը, բանջարը զետնից մեկ թիղ վեր էր ելել։ Մարտի սկզբին արդեն տարմերը եկել էին հեռու տեղերից և տանիքների կրամիտների մեջ սկսել էին իրենց բունը շինել, կոռուկները, վայրենի սաղերը երամ-երամ, կոկոալով Դոն զետի կողմից դեպի Ռուսաստան էին թռչում գնում։ Էլ. վախ չկար հանկարծակի ցրտերից։ Մի քանի օր էլի անցավ, արարիչ աստված, էնպիսի շոքեր արավ, որ բոլորովին հունիսի տոթ ու տապն էր... չորությունից զետինը սկսեց ճաքճքել, ձյունի թողած խոնավությունը վաղուց անցել անհետացել էր։ Հողագործները աստված աստված էին կանչում։ Եթե էլի մի քանի օր էտպես շարունակվելու լիներ, ամբողջ ցորենը պիտի թառամեր, վիշանար։

Էտ ժամանուկները ինչպես կլինի որ ձիս ոտքը վրնասել էր, ոչ միայն քեռ քաշել, ոտքի վրա կանգնելու ուժ չուներ անասունը։ Բայց այդիս անպատճառ ջրել էր պետք, թե չէ էնքան տարվա աշխատանքս մեկ շաբաթվա մեջ պիտի գնար։ Ուղեի չուղեի մեկ ջրկիր պիտի բռնեի, պետք է զետից-նկատմած է որ աղբյուրի ջուրը պարտեղին օղուտ չի տալիս—տակառ տակառ կրել ու դույլերով ծառերի տակը լցնել տայի։

ինպես էլ արի. բանվորիս հատկապես ջրկիր Մարտի-
րոսի ևոնից զրկեցի, որ վաղվանից սկսի զետից ջուր
կը ել:

Մյուս օրը բաղար գնացի և մինչև կեսօր, ինչպես
սովորությունս էր, խանութումս մնացի: Երբ կեսօր՝
վա ճաշին տուն վերադարձա, Մարտիրոսը երկու ձեռ-
քին երկու դույլ (վեղրո) անդադար տակառից ջուր
էր քաշում և պարտեզիս տակառիկներն էր լցնում,
բանվորս էլ— Խրիմից նոր ծառեր էի ապսպրել—տեղ-
տեղ փոսեր էր փորում: Հացից դեռ նոր էի վեր կա-
ցել, մեր Մարտիրոսը էլի մեկ տակառ էր բերել զե-
տից և պարտեզո կրելու վրա էր, որ ես էլ էնտեղ գնա-
ցի՝ նայեմ, բանվորս ի՞նչ բանի վրա է:

Մի հին ծիրանի ծառս էն ձմեռ ցուրտը խիել չո-
րացրել էր, բանվորիս պատվեր էի տվել որ արմատով
հանի և նորից այնաեղ մի փոս փորի, որ նոր ծառ
տնկեմ: Երբ պարտեզո մտա, Հենց էտ փոսը փորելու
վրա էր բանվորս: Գնացի կանդնեցի էտ փոսի տփին և
թմրածի պես մնացի. շատ կեցա էտպես, քիչ կեցա,
չդիտեմ. միայն բավականին ժամանակ մնացած պիտի
լինեմ, քանի որ Մարտիրոսը այդ նոր բերած տակառն
էլ արդեն դատարկել էր և սուս-փուս ետև կանդնել
էր, միտքը երեխ փող ուղենալն էր, բայց երեսը չէր
բռնում ինձ բան տաելու, ձեռքը խաչ կապած կանդնել
էր խեղճ մարդը: Մեկ էլ ետ դառնամ, ի՞նչ տեսնեմ.
Էտ մեր Մարտիրոսը սառած քար կտրած կանդնել է,
աչքը փոսից չի հեռացնում, ուղիղ մեջն է նայում ու
աչքից առատ-առատ արտասուզ է վազում ու զետնին
է թափիվում...

«Հածե՝ (այ տղա), ի՞նչ եղամ քեղ», — հարցնում
եմ:

Բան չի տում:

«Հածե Մարտիրոս, — տում եմ, — զժվել ես՝ ի՞նչ
է. Էտ հասակի մարդ լաց կլինի՞ որ, չե՞ս ամաչում,
երեսիդ դույնին մեկ նայիր, բոլորովին մեռել ես
ո՞ւ»:

Մարտիրոսը էլի, սուս կանդնել է, փոսի մեջն է նայում: Էտ ժամանակ բանվորս հողը փոսից հանեց ու մի կողմ շպոտեց. հողի հետ մի փթած փայտի կամ ոսկորի պես բան էլ կար, որն որ գլորվեց հենց ոտքիս հասավ: Հանկարծ մեր Մարտիրոսը խելազարի պես վրա ընկավ էտ փթած ոսկորին, շտապով գետնից վերցրեց ու դիվահարի ձայնով կցեց կանչելու.

«Յանկա՛, յանկա՛» (տանտիկին, խանում), «Վար՞ պե՛տ, վարպե՛տ, Մկրտիչ վարպե՛տ, ահա ձեր կո՞րած չախուն, ահա էն չախուն... Գտնվե՛ց... դտնը-վե՛ց... Մեռնեմ անունիդ, սուրբ Մինաս, վերջը վերջը դու լույս հանեցի՛ր իմ կորուսաը»:

Կանդնած տեղս սառած մնացի, էսպիսի զարմանալի բանի դեռ խելի հանդիպած չէի, աչքովս չտեսնեի, ու ուրիշից լսեի— բոլորովին չէի հավատա, որ Մարտիրոսի պես ծանր բնութքով մարդը— տասնուշինդ-քսան տարուց ի վեր նրան ճանաչում էի—էտպես խենթ-մենթ դուքս տա: Ի՞նչ մեղքս պահեմ, խեղճ մարդուն խելազարված կամ բոնված կարծեցի, բայց վերջը, երբ բանը տեղով իմացա, մտքիս մեջ մեղայի և էտ կարծիքս փոխեցի:

Մարդուն հազիվ-հազ խելքի ըերի, թե չէ խեղճը հարբածի պես բան եղել էր: Էտ փթած ոսկորը ձեռքը ամուր բոնած, հօյ-հայ պատերն է բարձրանում, «յանկա» է կանչում, «վարպետ» է կանչում, մեկ էլ լոռամ է, մինչդեռ Մկրտիչ վարպետի մեռնելը քսան տարուց ավելի է, նրա կնոջ մեռնելն էլ քառասուն տարուց պակաս չի լինի:

Էս ոռնոս, որտեղ այժմ ես կենում եմ, ժամանակով տիրացու Մկրտչինն էր: Էտ տիրացու Մկրտիչը սրանից հիսուն տարի առաջ էս տան մեջ կարդացնելիս է եղել: Ինչ որ էլ լինի, մեկ խոսքով, բանի եղելու թյունը էս էր: Բայց դու արի ու հիմա հարցրո՛ւ թե՝ ինչո՞ւ ջրկիր Մարտիրոսը փոսի առջև սառած մնացել էր ու լաց էր լինում, ինչո՞ւ փթած ոսկորը տեսավ թե չէ, գժի նման գետնից վերցրեց ու սկսեց «յանկա» ու

«վարպետ» պարել։ Էտ էլ ջրկեց Մարտիրոսը իր բերանով թող պատմի։

«Մրանից հիսուն ու հինգ տարի առաջ, ես քո կեցած տան մեջ կենում էր Մկրտիչ անունով մի տիրացու և քանի որ էս տիրացուն իր ընկերակիցների մեջ ամենից գիտունն էր հիշվում—այսինքն՝ ասել եմ ուզում թե՝ դա քիչ-միչ գրել-կարդալ գիտեր, մյուսները և էն էլ չդիտեին—իր համար պարապմունք էր արել աշակերտներ սովորեցնելը։ Ես էլ էտ ժամանակները կլինեի գուցե տասը տարեկան։ Մեկ անգամ պապաս (հայրս) թեկոց բոնեց ու տարավ տիրացու Մկրտիչի մոտ աշակերտ տվեց։

Պապաս— աստված Հոգին ողորմի—չար բնութքով մարդ էր։ Ինքը որովհետև մինչև պսակվելու օրը հոր փայտից դողացել էր, էնողես էլ ինձ էր ուզում խիստ պահել։ Պարծանք չլինի ասածս, իմ բնութքս ավելի մամայիս (մորս) բնութքին էր նման— սուս-ու-փուս, վիզս ճուկ։ Բայց էտ չօղնեց։ Երբ որ պապաս առաջին անգամ տարավ ինձ Մկրտիչ վարպետին տվավ, նախ և առաջ մեկ լավ ականջո ոլորեց, հետո մեկ ապտակ շխկացրեց երեսիս և ասավ։

«Նայի՛ր, վարպետ, որդուս բերել եմ, կաշին քեզ, ուկորը ինձ. ինչ կուզես արա, ուզում ես խեղդի՛, ուզում ես քերթի, ուզում ես մորթի, էնքան է որ հիմար եմ տալիս, խելոք պիտի առնեմ»։

Վարպետ ասած բանդ մեր ժամանակները, ի՞նչ ասեմ քեզ, թե որ ասեմ զայլ-զազանից էլ սասանական էր, արդյոք զորթ ասած չե՞մ լինի։ Էտ հիմտ է որ երեխին վախեցնել որ ուզում են, «ահա արջը եկավ, ահա վիշապը եկավ, ահա մըռամըռասը եկավ» Են ասում, որ երեխան մի քիչ սրտի մեջ վախ ունենաւ իր չարությունից ձեռք վերցնի։ մեր ժամանակները «վարպետի» անունը որ տային, լեղիներս կալառեր, վախչող-վախչողի կլինեինք. որս դոլաբը կմըռաներ, որս ծալքի մեջ կուչ կգար, ժամերով կկենար,

ձայն-ծպուռն չէր հանի— էսպես սասան-սասանի կը-
դայինք:

Երբ ես ավելի փոքր երեխա էի, վարպետի անու-
նը լսելիս մեկ ձիգ հասակով, երեսը չոր-չոր, սուր մո-
րուքով, շալե կապայով, մեկ ձեռքին տեր-ողորմյան,
մեկել ձեռքին կարմիր ճիպոտ— էտպիսի մի հրեշ էի
երեակայում։ Երբ որ պապաս ձեռքիցս բռնեց, տարավ
վարպետի տուն և ինձ հանձնեց նրան— իր ձեռքով ա-
կանջս քաշածը ու ապտակ տվածը էն ոչինչ— մտքիս
մեջ էնպես կարծեցի, որ ողջ-ողջ ինձ պատանքեցին և
սև հողը դրին. . . Որբի պես վիզս ճուկ կանդնել եմ,
իսկը այն կապած-կապկապած մատաղի գառը, որ մինչեւ
ժամկոչի դանակ սրելը՝ սուս-փուս պառկել է նրա
ոտքի տակ. . .

Մկրտիչ վարպետը ծալապատիկ նստած էր մեկ
քառակուսի պստիկ մինղարի վրա— մեր ժամանակնե-
րը հիմիկվա պես վարպետի տանը աթոռներ, նստա-
րաններ, սեղաններ չկար— երեսուն հինգ քառասուն ա-
շակերտներ էլ կողքե կողք, մեջքները պատերին ա-
րած, իրենց մինղարների վրա նստած, ձեռներին մի
մի պնակիտ կամ քերական-պնակիտ— տախտակի վրա
կպցրած տպագիր այբուրեն քերական-այբուրենարան
զիրք։ Դասերն էին սովորում. այն սասանական «Ճի-
պոտը» վարպետի առջեն էր։ Էսօրվա պես միտքս է.
Երկայնքը հինգ չարեք կլիներ, բութ մատիս հաստու-
թյունը, ծայրին ծակ ուներ, ծակի մեջն էլ թել էր
անցկացրած, որ պատից կախվի։ Աշակերտներից մի
երկուսին ճանաչում էի, բայց չատերին առաջին ան-
գամն էր տեսածու։

«Չէ՛, ի՞նչու,— ասավ Մկրտիչ վարպետը. գուցե
որդիղ ուշաղիր է լինում, դասը յավ է սովորում,
գուցե խեղճը իսկի չարություն չի անում։ Էն ծեծը որ
կա, չարերի ու ծույլերի համար է. . . Դու իսկի լսած
չե՞ս. Տեր մեր Հիսուս Քրիստոս առե՛ (երեսը խաչ
հանեց, պապաս էլ ետևիցս) օրհնյալ է փայտն (Ճի-
պոտը վերցրեց և ցույց տվավ աշակերտներին), որով

Անի արդարություն... Դեհ, էտ էլ էտպես...

— Զէ,— ասավ պապաս,— իսկի էտպիսի բան կլինի՞... ին ավետարանի խոսքը կա ու կա, բայց երեխան որ առանց ծեծի մեծանա, մեկ օր ինքը—հեռու տանից տեղից —հորն ու մոր վրա ձեռք կրարձրացնի։ Աշխարհս էտպես եկել է, էտպես էլ պիտի գնա։ Հիմա դու, ինչ է՝ վարպետ ես, մեր հնուց կարգերը ոտքի տակ պիտի տա՞ս, ի՞նչ է... իհարկե, կարգդ աստված հաստատ պահի... բայց երբ լրել եմ թե որդուս երես ես տալիս, վախով չես պահում, երախտիքդ խնայում ես նրանից, սիրով թող չցավի, թքել եմ ես քո դու ված իմաստությունիդ վրա... ի՞նչ է, դու կարծո՞ւմ ես թե ես որդուս տիրացու կամ վարդապետ եմ ու զում անել... իս չե՞ս ուզում, —ասավ պապաս և բութ մատը խցկեց կողքի երկու մատների մեջտեղ... —Տերտեր, վարդապետ, տիրացու, ժամկոչ էտ ամենը մեկ տեսակի բաներ են։

Նայեաց սիրով հայրը դժած,

Քաղցած ենք, տուր՝ մեկ կտոր հաց...

Իհարկե, դրոց լեզուն գիտես, քերական ճարտասանություն, աստվածաշունչ— ամենը կարդացել ես, բայց ասելուցու ինձնից քեզ խրատ չլինի... «Էտ աստված-պապան Ալամ Եվային որ ստեղծեց— թե որ գրել կարդալը լավ բան էր, ինչո՞ւ իսկույն առջևները մեկ քերական չդրավ, չասավ թե էս լավ բան է, սովորեցե՛ք»։ Ի՞նչպես է որ ողորմած աստված հատուկ իր ձեռքով ստեղծած աղամորդուն լավություն չէր կամենալ... Հը՞, ի՞նչպես ես, զորթ է ասածս թե չէ՞... Բայց ես քեզ դրանից էլ խելոք, խելքի պառկելու բան առեմ։ Էտ գրել-կարդալ ասածդ ուրիշ հաշիվ ունի... Էտ պստիկ երեխան որ կա, կատարյալ մի վայրենի դապան է. ինչպես որ դադանին դնչկալով, շղթայով կղսպեն, զառը կղարձնեն, հենց էնպես երեխաներին էլ գրել կարդալով կղսպեն, հոգիները ջանից կհանեն, աչքերի լույսը կմարեն, կմաշեն. ահա դրանից հետո երեխան օրինավոր մարդ կղառնա, վիզր կծոի, սրտի

մեջ ահ կունենա, մեծի առջև ձեռքը խաչկապած կը-
կանդնի, մարդու սիրտ ցավեցնելու տեղ՝ սիրտ շահե-
լու կաշխատի, հարուստի ու իշխանի պատիվը կճանա-
չի... Ապա, ջանս, դու դիր կարդացող ես, իմաստուն
ես, բայց քեզնից տեղով դիտեմ գրել-կարդալու օդու-
տը:

Ասավ ու տեղից ելավ:

— Եհ, ինչպես որ ասի, էնպես էլ կանես. վարձդ
էլ ինչ որ է՝ չորս ամիսը մեկ կառնես:

Վարպետի վարձ տարեկան պիտի տայինք երկու
ուրբի ասիզնացի, հիսուն հատ ձու, մեկ փուլթ ա-
լյուր, մեկ հավ և մեկ բադ:

Պապան դնաց, ես մնացի: Վարպետս դարձավ ինձ
և ասավ. «Հածե (ձո) պստիկ, անունդ ի՞նչ է»:—Մար-
տիրոս է, ասի. ձայնս փորիցս էր դուրս դալիս: «Հա-
ծե Մարտիրոս, ասավ, էս երկա՛յն ճիպոտը տեսնո՞ւմ
ես», հետո մինդարի տակից հանեց մի փալախա, «Էս
Փալախան էլ տեսնո՞ւմ ես»:

Աղջ մարմինս փուշ-փուշ եղավ. երբ որ կարմիր
ճիպոտն և հաստ Փալախան տեսա, կարգին ջերմով
բռնվածի պես ամբողջ մարմնով դողացի:

«Հը՝ վախեցա՞ր,— ասավ վարպետս,— շտե լավ
իմացիր որ չարություն արել ես թե չէ, տապանիդ
կաշին կալոկեմ»:

Ասավ ու ճիպոտը ժը՛վ ժը՛վ ժը՛վ թափ տվավ:

— Հետդ քերական բերե՞լ ես,— հարցրեց հետո:

— Հա,— ասի ու քիսայիցս հանեցի մի հաստլիկ
դիրք կարմիր կաղմով ու պղնձե կոճակներով:

— Էս ի՞նչ է,— ասավ վարպետը,— բեր, մեկ
տեսնեմ:

— Պապաս տվավ, ասի ու դիրքը իրան տվի:

— Հածե ապուշ, սա քերակա՞ն է որ ձեռքդ տվել
են: Սա Նարեկ է ո՛ւ:

— Պապաս տվավ, ասի նորից, ուրիշ բան չդու-
ասելու: Ի՞նչ նրա քերականը դիտեի, ի՞նչ Նարեկը. էն
ըստեին բացի ճիպոտից ու Փալախայից ուրիշ բան չէի

տեսնում աչքիս առջև։ Ինձ էնպես էր երեռում, որ տան
շորս պատերից ամեն տեղ ճիպոտներ ու Փալախաներ
են կախած, տղաների ձեռները մեկ մեկ ճիպոտէ էին
երեռում ինձ, ոտներն էլ մեկ մեկ Փալախա։ Առաջին
անգամն էր վարպետի մոտ զնալս, աստված կսիրես,
ես ի՞նչ գիտեի՞ ինչ ասել է կարդալ, դրել, քերա-
կան, նարեկ։

— Անշնորհք, — ասավ Մկրտիչ վարպետը, — տղան
որ վարպետի մոտ է գալիս—էն գլխից ձեռքը քերական
կտան։ Քերականը որ վերջացնի, պստիկ սաղմոս կը-
տան։ Էն էլ որ վերջացնի՝ մեծ սաղմոսը կտան։ Նբա-
նից հետո ժամագիրք կտան, հետո ավետարան կտան,
էն վերջը նարեկ կտան, էն էլ որ ավարտի, տսել
է, օրինավոր կարդալը վերջացրած կենի, վարպետից
էլ դուրս կերթա։ Բայց, ապուշի գլուխ, արի նայենք,
այսքան բան դու ե՞րբ պիտի ավարտես, որ նարեկը
կարողանաս կարդաս… Նայիր էտ տղաներին. ո՞չը
չորս տարի է մոտս, որը երեք տարի է, մեջերը էնպես-
ներն էլ կան, որ հինգ տարի են սովորում, բայց մե-
կի ձեռքը նարեկ տեսնո՞ւմ ես… Զէ՛, տղաս, զիր
կարդալը էտ տեսակ հեշտ բան չէ՛. էս ներկարարին
կաթսան չէ որ աղային մեջը գցես հանես ու հոր ձեռ-
քը տաս՝ «տհա, որդիղ պատրաստ է»։ Էյ որդիս, որ-
դիս, դեռ շատ պիտի աշխատես, ձեռքիդ ախն ու ատ-
քիդ տապանը դեռ շատ պիտի, բշտի ու քանի անգամ
կաշին պիտի փոխի, մինչեւ որ նարեկին հասնես…

Ես գլուխս կախած լսում էի. ասածից էսքանը հաս-
կացա՝ որ մկան պես թակարդ եմ ընկել, մեջիցը տ-
ղատվելու ճար չունեմ, մեկ կողմից խխտ հայրս,
մյուս կողմից դեկի պես վարպետս, էս կողմը ելրոկ,
էն կողմը ըռց. որտեղ որ դառնայի՞ դժոխք էր։

Բայց դու աստծու ողորմությունը տես— մեռնեմ
նրա սուրբ անունին։ Վարպետս պատից առավ պնտեկ-
տը, հինգ հատ զիր ցույց տվավ՝ այր, բեն, զիմ, զա,
եչ, «Մինչեւ կեսօր էսքանը կսովորես, դասդ չտված
տեղիցդ վեր չկենաս ու տուն զնալ չհամարձակես»։

Կարծեմ մինչև կեսօր ժամ կամ ժամուկես էր մը-
նում, ասել է՝ բավականին ժամանակ կար: Սկսեցի
սերտել. էնպես սիրով կարդացի, էնպես սիրով սովո-
րեցի, որ—սուտ չասեմ—քառորդ ժամվա մեջ էն դառը
սերտեցի: Գնացի կանգնեցի վարպետիս առջև, «ղասս
դիտեմ» ասի: Տեսնեմ, ասավ: Ժըվը ժըվը ջրի պես
այսի:

— Այ ապրիս, ասավ. Հինգ հատ զիր էլի, որ տամ,
ասավ, կարո՞ղ ես սովորել: «Տեսնեմ, դուցե կարողա-
նամ», ասի:—Մեկ տեսնեմ շնորհքդ, ասավ. զա՞ն, է՞ն,
ըթը՛, թո՞ն ու ժե՞ն տվավ: Կհավագա՞ս, քառորդ
ժամ անցած չանցած, էն էլ սերտեցի ու գնացի սոխա-
կի պես կարդացի վարպետիս առջև: «Շեն կենաս»,
ասավ վարպետս. «Էտ լավ է, շատ ապրես, Մարտի-
րոս, ա՞ֆերիմ քեզ: Էլի հինգ զիր տա՞մ, էն էլ կա-
րո՞ղ ես սերտել»: Ես սիրու առա:—Ինձ համար էն ի՞նչ
բան է որ, ասի. թեկուզ տասն ու հինգն էլ տուր, ա-
սի արդեն հանդգնացած. «Զէ, տասնուհինգը շատ է.
մեկ անդամից կշշիլվես. տասը հատն էլ բավ է. ահա
քեզ՝ ինի, լյուն, խե, ծա, կեն, հո, ծա, ղատ-
ճե, մեն, յի. հերիք է էսքանը»:

Գնացի տեղս նստեցի, բայց սիրոս սեղմվեց.
մտքիս մեջ կասկած ընկավ՝ իսկ եթե՞ չկարողանամ:
Աստված հոգին լուսավորե, մամաս ինձ մեկ բան սո-
վորեցրել էր՝ «Երբ որ մեկ բանի ետևից ես ու նրան
հասնել ես ուղում,—ասել էրմամաս,—մտքիդ մեջ սուրբ
Մարդուն կանչիր. «սուրբ Մարդիս. դուն նեղացածիս
հասնես» ու երեք անդամ երեսդ խաչ հանի՛ր»: Հիմա
ես մտքիս մեջ էտ աղոթքը ասի, բայց երեսս խաչ հա-
նել թե ամաչում էի և թե վախենում: Պստիկ էի, բայց
էլի ճարտար էի. կամացուկ ձեռքս վարտիկիս գրպա-
նը կոխեցի և էնտեղ խաչ հանեցի ու միամտված սկը-
սեցի, երրորդ ղասս սերտել: Հինգ անդամ իրար ետե-
վեց կարդացել էի կարդացած չէի— դու էս հրաշքին
մտիկ արտ— էտ էլ ջրի պես սովորեցի:

Հիմա բանը էնտեղն է հասել, որ ինքս ինձ չեմ

հավատում. մտքիս մեջ ասում եմ. «Էս երա՞զ հո չէ, քնի՞ս մեջը հո չեմ»: Զեռքս ծոծրակս եմ տանում, գլուխս քորել եմ ուղում, իրը թե օջիլներն են կծում—մինչդեռ երեկ մամաս ինձ տաշոր նստացրել է, լավ լվացել է, գլուխս էլ սանրով էնքան քերթել է, բոլոր ոջիլները կոտորել է, որ ոջիլ չէ, մեկ անեծք էլ մնացած չէ—բայց միտքս էն է որ եղունդովս ծոծրակս կսմթեմ, որ տեղով խմանամ՝ երա՞զ է էս, թե իրականություն: Ծոծրակս կսմթում եմ. եղբայր, ցավ եմ զգում: Ա, կասեմ մտքիս մեջ, երազ չէ եղել: Ես էլ էտ էի ուղում...

Վերջապես կերթամ վարպետիս առջեւ ցցված կը կանգնեմ, «դասս գիտեմ» կասեմ ու ուղղակի մարդու աչքի մեջ կնայեմ: Վարպետս տեղից վեր է թռչում, «Էս ի՞նչպես շոտով սովորեցիր», ասում է: Ես սուս կանգնել եմ, մտքիս մեջ խնդում եմ վրան: Մի քիչ կենալուց ետո, «Չի լինի՞ թե, ասում է, էն գլխից գիտեիր այրուրենը և հիմա գիտեցած դասերդ եկել ես նորից տալիս», ասում է:

— Չէ՛, ասոված վկա, ասում եմ, էսօր առաջին անդամն է պնակիոր ձեռքս, ասում եմ:

«Ղո՞րթ», ասում է մարդը:

— Հա, ասում եմ:

Մարդը զարմանում է:

Ախար դորթ էլ զարմանալու բան էր. քաղաքի հիմք դցելուց ի վեր էսպիսի բան տեսնիած էլ չէր, լոված էլ չէր.

— Որ էնպես է, արի նայեմ, դասդ ասա:

Զուրի պես դասս ասի:

— Այժմ թարս կարդա՛. մեկ տեսնենք, ասում է, այսինքն յի, մեն, ճե, զաթ, ինչ որ է:

Թարսից էլ կարդում եմ. մարդը էլ ավելի զարմանում է:

— Մյուս զասերդ էլ մի՞տդ են, մոռացե՞լ չե՞ս, ասում է:

— Չէ՛, մոռացած չեմ, ասում եմ:

— Ասա՛, ասում է:

Էն էլ առանց շունչ քաշելու դրվոր դրվոր ասում
եմ :

— Թարս կարդա՛, ասում է :

Թարս էլ կարդում եմ : Մարդու երեսը մեկ տեսակ
կլինի : Ծոցից ժամացույցը հանում է, նայում է —
մինչև կեսօր էլի ուղիղ մեկ ժամ է մնում :

— Մինչև դպրոց արձակելը ողնակիտդ վերջացնել
կարո՞ղ ես, հարցնում է :

«Տեսնեմ» զուցե կկարողանամ», ասում եմ :

— Է՛, զնա սովորիր, ասում է, ու սկսում է
մյուսների դասերը նայել : Ճիշտոն ու Փալախան տեղե-
րից շարժվում են ու իրենց շնորհքը ցույց են տալիս :
Տղաների ճիչ ու աղաղակների, լաց ու գոշումի, մեջ ես
մնացած բոլոր դրերն էլ սովորում վերջացնում եմ,
այր ոհ — աս, վել այր — վա, ասվա, ծա ինի մեն-
ծիմ, ասվածիմ, էտ է կապում եմ, բոլորովին պատ-
րաստ զնում նորից վարպետիս առջև կանգնում, էն էլ
պատասխանում եմ : Մարդու լեզուն պապանձվում է,
խոսք չի կարողանում ասելու, և մենակ էս է ասում .

— Մարտիրոս, մեկօր զու մարդ պիտի զառնաս :

Ռւրախ-ուրախ առն եմ զնում և տեղն ու տեղով
մամայիս եմ պատմում : Մամաս սրտի ուրախությու-
նից հայ-հայ ճաքվում է կինամարդը, ինքն իրան
բռնել չի կարողանում ու իսկույն զնում է հարևաննե-
րի մոտ և ասում է թե՝ էսպես, էսպես որդի ունեմ ու
իմ պատմածի վրա տանապատիկ իրենից է ավելաց-
նում, հնարում է թե՝ կես ժամվա մեջ որդիս էնքան
բռն է սովորել, որ տիրացուի չափ, զուցե ալելի էլ
զիտի . Ես ինչ զիտեմ, շտե՛, հողեսր կառավարու-
թյունից ուրար պիտի տան ինձ ու, առաջնորդը ինձ
գրագիտության համար իրեն մոտ պիտի վերցնի ու,
ասում է էլի, բան չունես : Կինամարդ չէ՞՝, մայր չէ՞՝,
սրտի մուրաղները եղած-պրծածի պես ասում է, պատ-
մում և մի կողմը քաշվում :

Բայց պապաս մեկ անգամից չհավատաց . «Սուտ է
ասում շան ցղնածը», ասավ, երբ որ մամաս նրան էլ

պատմեց իմ հրաշքները, — «Այրուբենը ծայրեծայր վեր-
ջացնելու համար քիչ-քիչ երեք ամիս պետք է, էն էլ
սուր մտքով տղի համար: Էտ մենք արհեստավոր ենք՝
ասենք, դրի երեսը տեսած չե՞նք, ի՞նչ. մենք էլ խո ե-
թեխա ժամանակներս վարպետի մոտ զնացել ենք: Մեկ
երկու անդամ ֆալախայի համը չառած՝ լսված բա՞ն
է, որ տղան այրբենը վերջացնի: Պարծենում է, շտե՛,
բոլոր սուտեր է փչում, դուն էլ նաղդ (կանխիկ)՝
փողի տեղ ես ընդունում: Նա գիտի թե ես կծուլանամ
վարպետի մոտ զնալու և սուտը հանելու... Գիր կար-
դալը դու հանաք ես կարծում, ի՞նչ... Ափսո՞ս, ափ-
սո՞ս, մեկ քերական չկա, որ կարդալ տայի ու սուտը
բռնեի»: Հետո դարձավ ու ասավ. «Հա՛ծե, էն տված
գիրքս ի՞նչ արիր, մո՞տդ է»:

Էն Նարեկը հանեցի քիսայիցս, իրան տվի ու ասի՝
— Վարպետը ասավ որ էս կարդալը դեռ վաղ է,
դեռ քերական պիտի վերջացնեմ, հետո սաղմոս, մյուս-
ներն էլ շտե իրենց կարգով:

Պատայիս վրայից նկատելի էր, որ կամաց-կա-
մաց սկսել է հավատալ, որովհետեւ տեղից ելավ, դը-
տակը առավ, դուրս զնաց ու մի քիչ ժամանակից հե-
տո ետ դարձավ ձեռքը մի բարակ գիրք բռնած:

«Ահա քեզ քերական, ասավ, զգույշ եղի՛ր, չկեղ-
տուես, չպատռես, թե չէ կաշիդ կպլոկեմ. Երեք շահի
եմ տվել դեղավաճառ Սարդսին»:

Մեր ժամանակները — շգիտեմ հիմիկ ի՞նչպես է—
գիրքը, թուղթը, գրիչը, թանաքը, դեղատանը կծախ-
վեր:

Քերականը որ ձեռք առա, ախորժակո բոլորովին
կորավ. առավոտվանից բան կերած չէի, բայց սեղա-
նին բերանս բան դնել չկարողացա, իսկելքս միտքս վար-
պետիս տանն էր, ֆալախայի, ճիպոտի վախը սրտիցս
դուրս էր ելել:

Վարժատուն որ զնացի, դեռ տղաները հավաքված
չէին, վարպետո էլ պարտեղ դուրս էր եկել՝ ահա էն
տեղերը (ասավ ջրկիր Մարտիրոսը ու մատով ցույց

տվավ զինջիրմեխո ծառի տեղը) — բոլթա կտար:

Ինձ որ տեսավ՝ «Հածե՛, ինչո՞ւ էտպես շուտ ետ դարձար, հարցրեց, կերակուր ջկերա՞ր, ի՞նչ»: — Զէ, կերա ասի: «Է՛յ, մի քիչ հանգստանայիր ղեռ», ասաց: — Հանգստացա, ասի: — «Լավ, ասավ, ուղում ես՝ էստեղ խաղա, թե չես ուղում՝ զնա՛ սենյակը նստի՛ր»: Քերականս ցույց տվի իրան, «ահա պապաս առավ», ասի: — «Լավ, ասաց, տղաները որ դան, կովորես»: — Զէ, ես հիմա եմ ուղում սովորել: Դաս տուր ինձ ասի... «Ի՛, ասավ, ի՞նչ էտքան շտապով: Զլինի շուտով սովորել, խալֆա լինել ես ուղում, որ ինձ պես երեխաներ կարդացնես», ասավ հանաք անելով:

Ես բան չասի, սուս կեցա, որովհետև իսկի մտքովը անցած չէր վարժապետ կամ տիրացու կամ տերտեր լինել. էնքան ուղում էի՛ մամայիս, հարեանների առջև պարծենամ թե՝ նայեցեք վրաս, ես ինձ համար մեկ բան եմ: Երեխայություն, էնպես չէ՞:

Վարպետս ճեռքիցս առավ քերականս, մեկ երեսը դարձրեց — էն արդեն պնակիտի վրա սովորել էի՝ «Ահա քեզ դաս»: ասավ ու՝ այր իսե չա, բեն ծա պեն դասը. զնա՛, սերտիր, ասավ, երեխաները որ հավաքվեն, ես էլ որ տեղս նստեմ, կզաս դասդ կպատասխանես:

Գնացի սենյակը, տեղս նստեցի ու սկսեցի կարգալ: Ի՞նչ տեսնեմ. իսկի դժվար չէ եղել, էլի, նույն այր բեն դիմ դան էր. էտ էլ շուտ սովորեցի: Վարպետս դեռ պարտեզումն էր, զափոանդի տերեններն էր փետում ու մեկ տուփի, մեջ շարում: Գնացի մոտը՝ «դասը դիտեմ» ասի: Մարդը ապշեց, բայց բան չասավ, առանց մեկ սխալի դասս ծայրեծայր պատասխանեցի: «Լավ, ասավ, այժմ էս առ՝ այր ժե ճե ոտ, բեն ինի մեն սե, ինչ որ է»: Նորից զնացի տեղս. աչքի անցկացրի նոր դասս, տեսնեմ՝ էն էլ հեշտ է եղել, էլի իմ դիտցած այրբենդիմդան է, էնքան որ գրերը մեջեմ մեջ շարված են: Նորից զնացի վարպետի մոտ, դասս լավ պատասխանեցի: Ինչ խոսքս երկարացնեմ. դեռ տղաները նոր էին սկսել հավաքվել — սուտ ասած չի-

նեմ— զուցե տասը դաս պատասխանեցի ու հասա ափե-նե-զերին, ու մինչև երեկոյան զանդեբը դրեթե գրքի կեսը անցա:

Պապայիս ասի, պապաս չհավատաց, կարծում էր թե սուտ էի ասում. բայց երեւմ էր որ սկսել էր արդեն ավելի ինձ սիրել, վրաս տաքանալ: Ով դիտի, զուցե մարդը—աստված ողորմի հոգուն—միտք էր անում «էս լակոտի ասած քսաներորդ մասն էլ զորթ որ մինի, էլի վատ չէ»: Մամաս իսո խեղճը տեղ չի դըտնում նստելու. սրտի խնդումից ինչ անի չանի, խսկույն իր տոնական մետաքսե շորը քանդում է ու ինձ համար ո. Գեորգի օրվա զեղեցիկ շոր է ձեռում. մեծաս էլ (մեծ մայրս, տատս) իր ծածուկ սունդուկից հանեց մեկ թանկագին թաշկինակ, զույնը վարդի պես կարմիր, վրան՝ սիրամարդի պոչի աչքերի պես կանաչկապույտ նախշերով, ու ինձ փողպատցու բախշեց. պապաս էլ խոսք տվավ որ վաղը առավոտյան կանուխ բազար զնա, վարտիկցու կապույտ նանկա առնի ու մեկ ջուխտ զեղին սափիխանե կոշիկ գնի:

Մարդուս լեզուն կարող է սրտիս խնդումը մեկնել... Կհավատաս, էն ըովելին ինձ մեկը թաղավորություն տար—աղամորդու համար դրանից լավ էլ ի՞նչ բախտ կա— ես էնքան ուրախ չէի լինի, ինչքան որ էն երեկոյան ուրախ էի... Վերջապես մյուս օրը, մինչև կեսօր քերականս ծայրեծայր ավարտեցի ու բերի պապայիս տվի, «Ահա, պապա, ասի, անվնաս հանձնում եմ քեզ քերականս, ասի, էլ ինձ պետք չէ. Հիմա կարգը եկամ պստիկ-սաղմոսին»:

Պապաս որ լսեց՝ ապշած քերանը բաց մնաց: «Հածե, զո՞րթ ես տում», ասավ:— Ապա սուտ ոլիտի ասեի, ի՞նչ, ասի: «Հանաք ես անում շան ցղնած»:— Ի՞նչու հանաք պիտի անեմ, ասի պարծենալով, որ չես հավատում, զնա՛ վարպետիս հարցրո՛ւ:

— «Հայդե, զնանք» ա՛սավ մարդը— աստված ողորմի հոգուն—ու զղակն առավ, շտապ շտապ զնաց, ես էլ ետեից զնացի: Երբ որ վարպետիս տունը մտանք.

«Բարե, վարպետ, ասավ պապաս, ի՞նչեր է ասում էս շան ցղնածը, ասավ ձեռքով վրաս յույց տալով, զո՞րթ է սրա ասածը թե՝ երեկ ու այսօր համ պնակիոր վերջացրել է, համ էլ. քերականը»:—Հա՛, ասավ Մկրտիչ վարպետը, զորթ է, զորթ, հիմա նրա համար մեկ պստիկ-սաղմոս պիտի գնես, էլի մեկ դաստաթուղթ, որովհետեւ, մեր կանոնով, քերական կարդացող տղան դեռ գիր չի գրի, բայց պստիկ-սաղմոսը որ սկսի, գրելուն էլ պետք է սովորի: Էսպես է մեր կանոնը: Հա՛, էլի, թանաք ու գրիչ էլ առ ու տուր իրան. դրանք էլ պետք են գրելու համար:

«Հա՛յ, շան կաթ կերած, ասավ պապաս սրտի, ուրախությունից. այ ապրե՛ս, Մարտիրոս, ապրես. մեռնելը կկարծեի, էտ տեսակ իմաստուն եղածդ չէի կարծի...» «Տիրացու ախպեր, դարձավ նա վարպետիս, իսեղճը ասում էր, ասում էր— ևս չէի հավատում. մի ասիլ ասածը զորթ է եղել: Հայ մայրդ մեռնի, էսպիսէ էլ զարմանալի, բան... Հիմա, վարպետ, ախըր քեզ էլ մեկ բանով շնորհակալ պիտի լինե՞նք թե չէ՞...»:— Եյ ի՞նչ, ասավ վարպետը սուսմուտ քաշվելով. առջևներս օրեր շատ, մեկ օր երեխ ամեն բան իր ճամփան կղտնի... «Ճամփան ո՞րն է. հենց էստեղից ուղղակի ոսկերչու մոտ պետք է գընանք, մեկ տեսոք արծաթե մտանիք պիտի պատվիրենք»:— Ի՞նչ ևս էտպես շտապում... դե՛... ասուծով... տեսնենք... գուցե...

Մարդը սրտի ուրախությունից խելքն ու գլուխը կորցրել էր:

Ինչպես որ ասել էր, էնպես էլ արավ պապաս. իսկույն դնաց ոսկերիչ Մելքոնի մոտ, մեկ հաստիկ, վրան կնիքով մատանիք առավ, հետո դնաց դեղավաճառ Մարդսից մեկ պստիկ-սաղմոս զնեց,—հետն էլ պարծեցավ մամայիս պես, մեկի վրա տասը ավելացնելով, և տուն բերեց: «Ահա քեզ պստիկ-սաղմոս, ասավ, բայց շան երես, տես, շուտ չպրծնես, թե չէ՞ փողս գրքիդ հերիք կանի՞» ախավ, հանաք անելով:

իսկույն գիրքը ձեռքս առա, բաց արի ու սկսեցի. ինձ համար կըմկըմալով կարդալ: Սկզբում մի քիչ դժվար երևացին վանկ-վանկ չդրած խոսքերը, բայց կարդալով, կարդալով, բավականին ընտելացա ու մինչև կերակուրի պատրաստ լինելը՝ գիրքը ձեռքիցս վայր չդրի:

Կեսօրից հետո որ վարպետիս մոտ գնացի, փքված հպարտ-հպարտ վարպետիս մոտեցա, էն արծաթե մատանին ձեռքը տվի, «Պապաս բարե արավ, ասի, էս քեզ զրկեց, բարի վայելես: Էս պստիկ սաղմոսն էլ ինձ համար առավ», ասի:—Շեն կենա, ասավ վարպետս ու մատանին մատին հագավ ու ինձ էլ նոր առած գրքից դաս տվավ:

«Էս մի քիչ դժվար կլինի, ասավ, բայց որ աշխատես, կամաց-կամաց կվարժիկ»:

Գնացի, տեղս նստեցի ու սկսեցի կարդալ: Չորս անգամ որ ետև ետևից կարդացի դասս, համարյա թե բերան սովորեցի: Եկա վարպետիս առջե, էն տերտերի նման ձայնով որ «Երանյալից» կարդացի, մարդը բոլորովին ապուշ կտրվեց, բերանը բաց մնաց: Երկու դաս որ էլի պատասխանեցի, «Հերիք է, ասավ վարպետս, հիմա թուղթ առ, ծալի՛ր, տետրակ կարի՛ր, բեր ինձ, քեզ համար տողեմ, օրինակ էլ տամ որ գըրես»: Էնպես էլ արի: Բայց գրածս կարդալուս պես շնորհքով չէր, զ, զ, շ, չ, ո, ո, խիստ չարչարեցին ինձ: Օրինակին որ նայում էի, կարծես հեշտ կերևային, բայց երբ գրիչը ձեռքս առա ու սկսեցի գրել, մատիս տակից ուրիշ տեսակ բաներ էին դուրս գալիս, օրինակին իսկի չէին նմանում: Մեկ էլ էս, որ առաջին անգամից իսկի չէի կարողանում տողի վրա ուղիղ գրեմ. կամ գրիչս էր գեղի վեր զնում, գրելու վերևի տողերին էին կպչում, կամ էնպես ցած էր զնում, որ ներքեւի տողին էին հասնում: Չոռով-մոռով մեկ երես բան գրեցի հայ-հայ երեկոյան զանգի ժամանակները, տետրակիս երեսին հինգ-վեց տեղ թանաք էր թափել, տեղ-տեղ էլ գրածիս վրա երեսիս քրտինքը կաթել էր,

թանաքը փոքրել էր, ուրիշ տեղ էլ թաց-թաց գրածս
թևովս փշացրել էի. վերջապես ջնջոցի պես մեկ կեղ-
տոտ բան տարի ցույց տվի վարպետիս: Գրածս տեսավ
թե չէ, վարպետս կարծես ուրախացավ: «Ապա, ջանս,
ասավ, դու կարծում էիր թե գրել-կարդալը հեշտ,
բան է: Զէ՛, բալաս, էտ հեշտ, շուտով վեր-
ջացնելու բան չէ՛. մենք մինչև էս տեղը
հասել ենք, գիտե՞ս՝ ինչեր ենք քաշել: Տղան մինչև
մեկ դույլ (վեղրո) թանաք չվիթի ու երեսուն դաստա
թուղթ չփշացնի, լավ գրել կոովորի՞՛: Գրելը կարդա-
լու պես հեշտ չգիտենաս. կարդալը ի՞նչ բան է որ,
նրանից էլ հեշտ բան կա՞ որ: Քոռ պառավ ու քավթառ
նանին էլ լավ վարպետի, մոտ որ տաս, կարդալ կոո-
վորի: Շնորհքը գրելն է»:

Տղաներն այնպես բարձր-բարձր ծիծաղեցին, որ
ամոթից աչքս մութ կոխեց, սիրտս լցվեց, կցեցի հե-
կեկալով լաց լինկլ: «Հածե, ի՞նչու ես լաց լինում, ա-
սավ վարպետս, ո՞ւյ, մեծսիրտ տղա ես եղել: Էտ-
պես հպարտ եղածդ չգիտեի: Ես քեզ մեկ խոնարհ տր-
ղա գիտեի, մի ասիլ որ փորիդ մեջ չար սատանա ես
ունեցել... Հա՛ծե հիմար, դու ե՞րբ ես լսել, որ մեկ
տղա առաջին անգամից, գրիչը ձեռքը առած չսուծ
ոլարդ գրի: Էտ դու կարծում ես թե քերականը որ
լրպու լրպու կարդացիր պրծար, ամեն բան էլ էտպես
շուտով պիտի սկսես ու վերջացնես: Զէ՛, ջանս, գրել-
կարդալը էտքան հեշտ բան չէ: Հեշտ բան ուզո՞ւմ ես—
զնա՛ դետինը փորի՛ր, ջուր կրի՛ր, ժամի դուանը մու-
րա՛— շտե, քեզ հեշտ արհեստ, իսկ գրել-կարդալը
հեշտ արհեստ չէ: Դու շատ քիթ լիր չքաշես, որ
պստիկ քերականը շուտով վերջացրիր: Քերականը
ի՞նչ հորս ցավն է որ. էն դեռ գրել-կարդալուն առաջի
երեսն է: Մեկ տեսնենք պստիկ-սաղմոսն էլ վերջաց-
րու՝ մեծ-սաղմոսը սկսի՛ր, մեծ-սաղմոսը վերջացրու՝
ժամադիրքը սկսի՛ր. էն էլ որ վերջացնես՝ ավետա-
րանը ձեռքդ առ, էն էլ վերջացրիր՝ նարեկը կարդա՛,

Էն էլ կարդացիր՝ հետո Չամչյան կա, Չամչյանից հետո
տրամաբանությունն կա, տրամաբանությունից հետո՝
ճարտասանությունն կա կարդալու, էն էլ կարդա-
ցիր... ո՞ր մեկն ասեմ, նրանց տեղը շատ... Ապա,
պարոնս, դու ի՞նչ գիտեիր»...

Տղաները նորից վրաս ծիծաղեցին. Ես նորից քեստ
ընկա:

Մինչև էս օրս հասկացած չեմ, ինչու էտպիսի.
Խոսքեր ասավ վարպետու: Հոգիս վկայում էր որ ես
վատ, անպիտան, անպետք աշակերտ չէի, էտ կծու
խոսքերին, էտ ծաղրին արժանի չէի: Էն էլ լավ գիտեի
որ ընկերներս որը մյուսներին նայելով, որն էլ նա-
խանձից էին ծիծաղում վրաս, բայց վարպետիս էտպես
հետո ժաժ եկածը չհավանեցի, դժվարս եկավ: Իսկ
նա չգիտեր թե ես իրեն ինչպես սկրել էի, էս ուրբ
ժամը վկա՝ որ (ասավ մատովը Լուսավորչի զանդա-
կատունը ցույց տալով) պապայիդ, մամայիդ մեռցը-
րու՝ ասեր, կմեռցնեի, էնչափ սկրել էի էտ անպիտան
մարդուն: Քեզ ի՞նչ ասեմ. էտ մարդը առաջին եկած
օրս, առանց պատճառի առներ վար կախեր ինձ, ոտ-
քիս ֆալախա զարներ— էնչափ սիրոս ցամեցրած չէր
լինի, ինչպես որ էտ խոսքերով... Դու ի՞նչ կասես,
հայ-հայ հիսունուհինդ տարի կլինի, դեռ մտքիցս ելած
չէ... Մեկ մեկ ժամանակ միտք եմ անում՝ չլինի թե
նախանձ էր... մյուս կողմից ես էլ կասեմ՝ դեռ ի՞նչս
էր տեսել, որ նախանձվեր... Սուտ չէ, զորթ է, եր-
կու օրվա մեջ ես էն արի, ինչ որ գուցե ուրիշները
երկու տարվա մեջ չէին անի, բայց ինչպես որ վար-
պետն ինքն էլ իր բերանով ասավ, իմ արածս դեռ
գրել-կարդալու առաջին երեսն էր, էնտեղ գուցե դեռ
հազար երեսներ մնացել էին՝ մեկ մեկուց դժվար...

Էտ չար ժամին իմ և վարպետիս միջից սև կատու
անցավ. Հոգիս զգաց որ կամ ես էտ մարդու գլխին
մեկ խաթա պիտի բերեմ, կամ նա իմ գլխիս... Ա՛խ,
հայ վա՛խ, ի՞նչու էն իրիկունը, տուն որ զնացի, էտ
ամեն բանը տեղով-տեղով հորս մորս չասի, որ նրանք

էլ քաշեին, առնեին ինձ նրանից ու մեկ ուրիշ վարպետի տային... Բայց սուս կեցա, մարդու բան չասի, դարդս սրտիս մեջ խորունկ թաղեցի, հետն էլ թաղեցի իմ բախտս ու ջահել արես...

Մի կտոր ժամանակից պստիկ-սաղմոսն էլ վերջացրի. պապաս մեծ սաղմոս առավ, մեկ ամսից էն էլ պրծա, ձեռքս ժամադիրք առա կարդալու, երկու-երեք ամսից ժամագիրքն էլ պրծա՝ ավետարանը ոկտեցի: Էտ միջոցին զիրս էլ կամաց-կամաց կարդի ընկավ, էնպես որ եթե իմ ու վարպետիս ձեռք կողքեկողք չղնեիր և մեկ լավ չնայեիր, դուցե շատ զանազանություն էլ չնկատեիր:

Անցավ էսպես մեկ տարի: Ես արդեն Նարեկն էլ պրծել էի, Զամչյանի քերականությունը սկսել էի: Վարպետս միջից տեղ-տեղ կարդալ կտար, ինչպես որ սաղմոսն ու ավետարանը, տեղ-տեղ էլ բերան սերտել կտար, բայց իսկի խելքս չէր պառկում թե դա ի՞նչ տեսակ բան է... Խոսքի վրա՝ ի՞նչ ասել է՝ «Վառ, վառի», ի վառե, զվառ», ի՞նչ ասել է էտ, դրա բուն միտքն ի՞նչ է, ի՞նչ է ուզում ասել, ի՞նչ է ուզում հասկացնել, ի՞նչ է ուզում սովորեցնել, այսինքն՝ ուզում եմ ասել, թե՝ դրա օդուտն ի՞նչ է: Էլի սաղմոսը, ժամագիրքը, ավետարանը կարդալիս զիտեի որ աղոթք են. Ես էլ որ չհասկանամ, միտք էի անում, աստված կհասկանա Հո՛ և իրեն արշած վառարանություններս ընդունելի կլինե՞ն Հո: Բայց այդ Զամչյանի միջի «Վառ, վառի, զվառեն» խոկի բան չհասկացա— Հիմա էլ չեմ հասկանում, զուցե էնպես էլ չհասկացած պիտի մեռնեմ: Ինքս ինձ միտք եմ անում. «Կամ էտ մեկ անպետք դատարկ բան է, դրանցից մարդուն ոչ մի օդուտ չկա, կամ դրա միտքը վարպետս ինքն էլ չդիտի»:


Մեկ օր, ինչպես կլինի որ վեր եմ կենում վարպետիս ասում. «Վարպետ, էտ քերականությունից, աշուում եմ, մարդ ի՞նչ է սովորում», ասում եմ: «Էտ քո խելքի բանը չէ՛, ասում է, երբ կմեծանաս, ասում

է, էն ժամանակ կիմանաս», ասում է:—«Թե որ—ես էր դառնում եմ իրեն ասում— թե որ մեծանալուցո հետո պիտի հասկանամ, ասում եմ, ավելի լավ էն չէ՞ որ, ասում եմ, թող դեռ մեծանամ և հետո սովորեմ. չը-հասկացած բանը սովորելը ի՞նչ շահ», ասում եմ:— Էստեղ արի, էստեղ: Մոտն եմ զնում:— Զեռքիդ ափը բաց արա՛, ասում է: Վախենալով, բայց էլի բաց եմ անում ափս... Մեկ կլափի էն ճիպոտվ, մեկ էլ կլա-փի, մեկ էլ կլափի. «Շտե՛ քեզ քերականության մեկ-նություն ու օդուտը. Հիմա հասկացա՞ր: Գնա՛, տեղդ նիստ և մեկ էլ խելքիդ կտրած չկտրածը դուրս չտաս»:

Ափս զնդակի պես ուռեց. կապույտ հետքերը չորս-հինգ ամսից հաղիվ անցան, շաբաթներով չէ թե դրել, մեկ ասեղ էլ չէի կարող վերցնել— էնպես կոկո-ծում էր ձեռիս ամեն մի պճեղը: Էլի սուս կեցա, պա-պայիս, մամայիս բան չասի: Հարցրին՝ «Ինչու ձեռո-ուռել է», ասի թե՝ «Վարպետիցս ետ զալու ժամանակ ոտքս քարին դեմ ընկավ, սայլի ճանապարհի վրա դր-լորվեցի, էտ միջոցին մեկ սայլ մատերիս վրայով ան-ցավ»:

Կես տարուց մեծ քերականությունն էլ ծայրե ծայր վերջացրի, հերթն հասավ տրամաբանությանը. բայց էտ գիրքը դեղավաճառի մոտ չգտնվեց, եղած չեղածը քաղաքի մեջ մեկ հատիկը կար, էն էլ 0... օղլուի մոտ էր: Կամա ակամա պիտի Ստամբուլից ապսպրվեր: Մինչև որ գիր գրեցինք, փողը դրկեցինք, մինչև որ էտ տրամաբանությունը ձեռներս հասավ, անցավ կես տարի: Էտ միջոցին ես մեկ անգամ էլ ծայրե ծայր քաղաքածք արի. Չամչյանի քերականությունը:

Ես գիտեի թե տրամաբանությունը որ զա, էտ տ-նօդուտ «վառ, վառի, վառիվ, վերյալ եմ, վերյալ ես, վերյալ է», դերբայ, կոչական, ա-ծական, իդական-ից կաղատվեմ: Բայց երբ տրամա-բանությունը ձեռքս առա ու սկսեցի երես երեսի ետե-վից, երես-երեսի ետեից բերան սերտել, էն ժամանակ տեղով հասկացա որ դրել-կարդալը հեշտ արհեստ չէ



եղել ու մեկ-երկու տարվա մեջ չի վերջացվի։ Դժվարը էն չէր, որ օրը կամ երկու երեք երես բան ըերան անեի, էտ զատարկ բան է։ Էն ժամանակ էնպես սուր միտք ունեի, որ ավետարանից կամ աստվածաշնչից գլուխ-գլուխ ըերան սերտելը ինձ համար մի զավաճ ջուր խմելու պես մեկ բան էր։ Դժվարն էն էր որ ըերանս կըլրար, գլուխս չէր մտնում, չէի հասկանում—հիմա էլ էտպես է հո-բայց էն ժամանակները մեջս ուրիշ կըակ կար, մեկ անկշտում ծարավ կար նոր-նոր բաներ իմանալու, ամեն բանի արմատը, իսկը գիտենալու, խոսքի վրա՝ ինչո՞ւ մեր ձմեռը բուք ու սառնամանիք է, իսկ Երուսաղեմում— մղղըսիների ասելով— իսկի ձմեռ չկա։ Ինչո՞ւ մեր տեղը ամառը տաք է, իսկ Սիրիու կողմերը, դեռ էն կողմերն էլ, ասում են թե՝ ամառ բոլորովին չի լինում, տարի-տասներկու ամիս ձմեռ ու բուք է, ինչո՞ւ զարնանը կոռոնկները, վայրենի սաղերը, արագիլները հարավից զեպի հյուսիս են զնում, ինչո՞ւ աշնանը էլի նորից ետ են դառնում։ Ի՞նչու ծովի ջուրը աղի է, ինչի՞ց է զոյանում փայլակն ու կայծակը, ձյունը, անձրևը ու կարկուտը։ Պո՞րթ է էտ ծեր մարդկանց ասածը թե ամպը Եղիո մարդարեի սայլի ակերից է զոռում, ի՞նչպես են տպում դիրքը, ի՞նչպես են զործում զառ փարչան, մտխմուրը, ի՞նչպես և ի՞նչից են շինում էս մեր պատուհանների ապակին... Հարցնելու, իմանալու, սովորելու բան շա՞տ, ո՞ր մեկը ասեմ... Բայց ո՞ւմից իմանայի, ո՞ւմը հարցնեի, ի՞նչ հնարով սովորեի... Երեի, ինքս ինձ միտք կանեի, կա էնպիսի մարդ, որ էտ ամենը գիտի, կա էնպիսի գիրք, որտեղ էս ամենը դրված է, բայց ո՞րտեղ զտնեմ էտ մարդուն, ո՞ւր է էտ գիրքը, ծովի ո՞ր անդունդից հանեմ... Մեկ էլ՝ որ գիրքը զտնեի ի՞նչ օգուտ, որ հասկանալու չեմ, որովհետեւ էնքան գիրք որ համարյա թե ամենն էլ ըերան սերտեցի, ինչպես կասեն հում հում կերա ու միշտից բան չհասկացա, էն գրքից էլ ի՞նչ պիտի հասկանամ... Կա՞ արդյոք աշխարհքիս երեսին էնպիսի մարդ,

որ կարողանար ինձ դիրք հասկանալ սովորեցնել... թե՞ ամենքն էլ ինձ պես դիրքը չհասկացած բերան սովորել են և հետո անունները իմաստուն, վարդապետ, տիրացու, վարժապետ է եղել:

Էսպիսի մտածմունքների մեջ էի դիշեր ցերեկ... Հալվում էի, մաշվում էի... չորս կողմու մեկ խելոք մարդ չիար, որ սրտիս դարդը առջեր վիթեի, որ էս կասկածները կամ հաներ մտքիցս, կամ մեկ ուրիշ ճար ցույց տար: Առավոտյան անկողնից վեր կկենայի, մամայիս կտեսնեի, երեկոյան աչքիս առջե միշտ պապաս էր. էտ ողորմելիներից ի՞նչ պիտի հարցնեի, ի՞նչ պիտի, սովորեի: Մամաս— աստված ողորմի հոգուն— սիրտս շահել որ ուղենար, կառներ՝ ձեռքով փախլավա, խուռապիտ, տեսակ-տեսակ հալվաներ կեփեր, կղներ առջես, կարծում էր թե դրանով ինձ մեծ բախտի հասցըց. Էն էլ ասենք՝ խեղճի ձեռքից ավելի ի՞նչ կզար: Պապաս էլ— աստված հոգին լուսավորերերանից կկտրեր ու ինձ համար դրքի, թղթի, դրչի փող չէր խնայի—խեղճ մարդու վաստակածը քանի՞ կոպեկ էր ոք— նա էլ կարծում էր թե դրանից ավելի որդի սիրել չի կարելի. Հետո երկուսն էլ զարմանում էին թե ի՞նչու ես ժամանակ-ժամանակ սրտիս նեղությունից հայ-հայ միսս եմ ուտում...

Էսպիսով կես տարի էլ անցավ:

Գարնան ժամանակներն էր: Մեկ օր առավոտյան վաղ վարժատուն գնացի: Վարպետը պարտեզում փոս էր փորում, հենց էնտեղ, որտեղ որ բանվորդ էս ըստ պեիս փորում էր, և ուղում էր մի ազնիվ ծիրանի ծառ տնկել, նրա կնիկն էլ պատի մոտ մաղղանոս, տարիսուն ու տեսակ տեսակ ուտելու կանաչեղեն էր որոնում: Մատեցա ու «վարպետ, ասի, հոգնել ես, ինձ տուր բահը, քիչ էլ ես փորեմ»:—Առ, ասավ, տվավ ինձ բահը ու ինքը գնաց շուշանների, կակաչների, սմբուլների վրայի հողը շուռ ու մուռ տալու, որ ջահել տերենները գուրս գան: Էտ միջոցին հարեանի դոնակից մի կինամարդ գլուխը ներս փոթեց. «Հաքա, Անուշ, էստե՞ղ

ես», հարցրեց:— Հա, էստեղ եմ, ասավ յանկան (տանտիկինը): «Էստեղ արի մեկ բուլե, բան պիտի առեմ», ասավ հարևանի կնիկը:— Գալիս եմ, դալիս, ասավ յանկան ու շտապով բերեց դարախով կանաչեղենը, վրան էլ մեկ սիրուն, ճերմակ ուկորե կոթով դանակ ու դըեց փոսի ափին ու ասավ ինձ. «Փոսը որ փորես պրծնես, էտ դարախը խոհանոց կտանես», ասավ ու շտապով վաղեց դեպի դռնակը: «Էս ի՞նչ սիրուն դանակ է», ասի, ու էլի իմ բանս եմ շարունակում: Փոսը փորեցի պրծա, բահը դրի փոսի ափին ու ինքս զնացի սենյակը դասս սերտելու. մտքիցս բոլորովին ելավ կանաչեղենով դարախը խոհանոց տանելը:

Անց է կենում ժամ ժամուկես: Մեկ էլ տեսնեմ յանկան, լեղին պատոած, ներս է մանում: «Հածե՛, Մարտիրոս, ասում է, դարախը խոհանոց չտարա՞ր», ասում է:— Զէ, յանկա, ասում եմ, մտքիցս ելավ, ասում եմ, էս բոպեիս կրերեմ: Գնում եմ դարախը առնում ու տանում տալիս յանկային: «Չախուն ապա ո՞րտեղ է», ասում է: Այն ժամանակ մենակ նկատում եմ, որ դանակը չկա: Վաղելով զնում եմ պարեզ, փոսի մեջ եմ նայում, բերանի հողն եմ շուռ ու մուռ տալիս, քրքրում, անցած ճանապարհո եմ տնդղում, դես ու դեն եմ ընկնում—դանակը չկա: Գալիս եմ յանկայիս մոտ, էսպես էսպես բան է, ասում եմ, դանակը կորել է, ասում եմ:— Ի՞՛, ասում է, իսկի էտպես բան կլինի՞, ասում է. իսկի լույս ցերեկով ահադին դանակը կիորչի՞, ասում է, քորո՞ց է, կեռի՞կ է ինչ: Շուտով գնա գտի՛ր, թե չէ գլխիդ էնպիսի բան կրերեմ, որ մինչև սև հող մտնելու չմոռանաս:— Ասավ էլ, արավ էլ անօրեն անհավատ կինամարդը:

Մեկ էլ զնացի պարտեզ, ամեն ծակ ու ծուկ փրնուրեցի, ամեն քարի, տերեկի, ճյուղի տակ նայեցի—չկա, չկա ու չկա էտ դանակը, ոտով գլխով կորավ; դետին մտավ: Նորից զնացի խոհանոց. «Յանկա, ասի, ամբողջ պարտեզը քրքրեցի, տեղ չմնաց, որ չնայեի, հողնեցի, բայց դանակը չդտա... ինչ ուղում ես ա-

ըա՛»...— թե դու չպտար, ես կգտնեմ, ասավ ու էն-
պես խոժոռ աչքով նայեց վրաս, որ կարծես կանզնած
տեղս հում-հում ուտել էր ուզում ինձ: «Եյ դտիր,
տեսնեմ՝ ինչպես ես գտնում» ասի սիրտս ելած: Ասի
ու դուքս եկա խոհանոցից:

Կատաղած երեսով վաղեց կինամարդը վարպետիս
մոտ: Ի՞նչ խոսեցին, չգիտեմ: Վարպետը մնաց սե-
նյակում, կնիկն էլ խոհանոց զնաց: Երկու-երեք ըո-
պեից երկու աշակերտ գդակները առան, վողոցի դրո-
նից դուրս դնացին (ես դեռ բակում կանզնած եմ):
Երբ որ երեխաները վողոց դնացին, ես էլ մտա ներս
ու տեղս նստեցի, սիրտս էլ էնպես վատ է, էնպես
վատ է, որ կարծես մահս եկել է. էս է կմարեմ, սիրտս
կանցնի: Ընկերներից մեկը կամաց ինձ ասավ, որ
վարպետս պապայիս ետևից դրկեց էն երկու տղանե-
րին: Վախենում եմ, բայց չեմ երեցնում:

Կես ժամ չանցած տղաները վերադարձան, պա-
պաս էլ նրանց ետևից ներս մտավ: Վարպետս տեղից
վեր կացավ:

«Ես քեզ ձայն էի տվել, ասավ, որ որդուդ վատ,
անազնիվ բնավորությունը աչքովդ տեսնես ու հաս-
կանաս: Էս հանդուզնին, էս անպիտանին— մատով վը-
րաս ցույց տվավ— ինչքան կարողացա սովորեղի,
աստծու առջև կարող եմ ասել որ ոչ մեկ աշակերտին
էնպես սրտով կպած չեմ եղել, ինչպես էս լիրը շանը:
Իսկի սուտ ասած չեմ լինի, եթե ասեմ թե իմ հարա-
զատ որդուս պես երախտիք ունեցել եմ վրան... Բայց
էսքան տարվա տանջանքիս փոխարեն որդիդ, էս հա-
րամ-սատկելու տղադ ի՞նչով վճարեց... Ականջդ բաց
արա ու մեկ լավ լսի՞ր: Մեկ որ էս անզգամը ինձ
չի հավանում, ինձ խենթ, բան չխմացող, իրանից ըս-
տոր, անճար մարդ է համարում: Ղորթ է, բերանով
չէ ասում, բայց նշանով, աչքով ցույց է տալիս, էտ
ես նրա ժաժմունքից եմ նկատում: Մեկ էլ աշակերտ-
ներիս սիրտը ինձնից սառեցնում է. «Ի՞նչ է մեր վար-
պետը, ոչ մի բան չգիտի ինքը, ի՞նչ է իր գլխին մեկ

խումբ աշակերտ հավաքել»։ Էսպիսի բաներ. Էտ էլ ես
վրայից, ժաժմունքից քիթուպունդից նկատում եմ—
չկարծես թե ականջովս լսել եմ, չէ՛, — սիրու զգում
է որ էտալես պիտի լինի։ Դորթ է, ապացույց բերել
չեմ կարող— մեղքը ի՞նչ առնեմ— ինքս չեմ լսել,
մարդ էլ չէ ասել, բայց գիտես՝ որ ասածիս մեջ ոչ
մի սուտ չկա։ Վրա երեքն էլ էս, որ որդիդ զող-ավա-
զակին մեկն է. Էտ արդեն կարող եմ ապացուցել։
Էսօր առավոտ որդիդ խիստ վաղ վարժատուն է
գալիս, երբ որ հաստատ գիտի որ էտ ժամանակ աշա-
կերտները դեռ հավաքված չպիտի լինեն։ Ի՞նչ է դրա
պատճառը, մտքում վատ բան չունե՞ր, ու գիտի՞ ի՞ն-
չեր է միտքը դրել անելու, իմ քնած ժամանակը տանս
մտնել ուղեցե՞լ է, ինձ կամ կնկաս դեղ տալ ուղեցե՞լ
է, ես ի՞նչ գիտենամ, ախալեր աստված չեմ որ սիրու
մտնեմ, մեջն եղածը տեսնեմ— թե աղամորդու սիրու
թե ծովի անդունդը, երկուսն էլ մեզ համար մութ են.
Էս մեկ։ Ես ինձ համար փոս էի փորում։ Որդիդ մոտ
եկավ, աչքիս լավ մարդ երևալու համար՝ «Տուր, առ
սում է, վարպետ, բահղ ինձ, դու հոգնել ես, ես փո-
րեմ»։ Դրան ո՞վ էր ասել՝ աստված կսիրես, արի ինձ
օղնիր։ Համարյա քսան տարի վարժապետություն եմ
անում, էտ քսան տարիա մեջ քչից-քչից ձեռքիս տա-
կից վեց հարյուր երեխա է անցել, իսկի մեկ անգամ
եղած չէ որ աշակերտներից մեկը դար ու ասեր.
«Վարպետ, բահղ տո՛ւր, փոս փորեմ»։ Ի՞նչպես է որ
հենց Մարտիրոսն է ասում ինձ էտ խոսքը։ Եթե արա-
ծը լավություն էր, էտ վեց հարյուր աշակերտներից
ոչ ոք ինձ լավություն կամեցած չէ՞ ի՞նչ, բոլո՞րն էլ
ինձ թշնամի էին, բոլորն էլ անազնիվ, վատ տղաներ
էին, իսկ որդիդ նրանց միջից առաջինը եղավ, որ ա-
սավ «դու հոգնել ես, արի քեզ օղնեմ»։ Ասել է որ
միտքը ծուռ էր. Էս երկու։ Նշանածս նրան տալիս է
կանաչեղենով դարախ ու ասում է՝ «Իսկույն այս դա-
րախը տա՛ր, խոհանոցը դի՛ր»։ Թե որ որդիդ լավ
մարդ է, մտքի մեջ վատություն չկար, ինչո՞ւ իսկույն
չսապավ, չտարավ ու ժամերով դցում է գետնի վրա,

ինչո՞ւ է էտպես անում: Մոռացա՞վ, կասես, բայց
Մարտիրոսի սուր միտք ունենալը ևս երկու տարուց
վեր դիտեմ, ետ ի՞նչպես է որ ժամագիրք, ավետա-
րան, քերականություն, տրամաբանություն ծայրե-
ծայր բերան է սովորում՝ չի մոռանում ու մեկ ջուխտ
խոսքը մոռանում է. իսկի հավատալ կարելի՞ է էտ բա-
նին... Ասել ի՞ որ «մոռացա» ասածը սուտ է, էտ
մեկ դատարկ մահանա (պատրվակ) է. նա մոռացած
չէ, այլ դիտմամբ էտպես արել է, մտքի մեջ վատու-
թյուն ունեցել է: Էս քեզ երեք: Վերջիվերջո նշանա-
ծիս պապայից մնացած թանկագին ինդլիղի չափուն
(անդլիական դանակը), որը երկուսս էլ աչքերիս լույ-
սի պես սիրում էինք, դաբախի վրայից դողանում է,
ով դիտի որտեղ է թաքցնում ու մեզ ասում է թե կո-
րավ, իսկի էտպիսի բա՞ն կլինի, ախալեր... Աշկարա-
բան է որ որդիդ վաղո՞ւց մտքում դրել է էտ դանակը
դողանալու միտք ունեցած չէ, էսօր որ առիթը
պատահել է, էլ ձեռքից բաց չէ թողել: Եթու որ որդիդ
դողանալու միտք ունեցած չէ, ապա ի՞նչու նշանածիս
ասել ի՞ «Էտ ինչ սիրուն դանակ է». երեխի հավանել է
որ զովել է, էտ ծծի երեխոն էլ դիտի որ դողը իր
հավանած բանը կդողանա... Շտե ասելս էս էր: Ահա
որդիդ, ահա ես, դու եղիր մեր դտապավորը:

Պապաս տեղն ու տեղը սառավ. երեսը մեկ ձյունի
պես սպիտակում էր, մեկ կրակի պես կարմրում էր.
Հա՛ իմ վրաս էր նայում, հա՛ վարպետիս վրա: Ի՞նչ
աներ իսեղճ մարդը. հավատար՝ մեղավորը որդին էր,
չհավատար՝ դանակի կորչելը շատ կասկածավոր բան
էր:

«Հածե Մարտիրոս, ասավ ինձ, էս բոպեին որտե-
ղից ուզում ես դանակը հանիր ու վարպետիդ տուր»:
— Պապա, ասի, չառած բանը ի՞նչպես տամ,
չպահած բանս ո՞րտեղից գտնեմ:

«Մարտիրոս», կանչեց պապաս էնպիսի սասանա-
կան ձայնով, որ քիչ մնաց իսելքս կորցնեի:
— Պապա, իսկի մի հավատալ, բոլորը սուտ է:

Ես գող չեմ, մի հավատալ, ես չեմ գողացել։ Վարպետը իմ վրա ջիգը ունի, երկու տարի է։ Համարյավարժարան մտնելու օրից ինձ վատություն է ուզում, բայց որ սիրտդ չկոտրվի, քեզ բան չէի ասում։ Մի հավատալ էտ մարդուն։ Զգիտեմ՝ ի՞նչ է եղել դանակը, զուցե մեկը ծածուկ պարտեղ մտել է զողացել, զուցե ազոավը ոսկոր կարծել թոցրել է, ես ի՞նչ գիտեմ, բայց կուրանամ, կույր մանգամ որ ես առաջեմ... Պապա, վարպետս քեզ հիմարացնում է, նրա միտքը դանակը չէ, այլ դանակի մահանայով իր հին ջեղը ինձնից հանել է ուզում։

Էսպիսի շատ բաներ ասի, բայց ո՞ւմը կասես։ Պապայիս աչքը մութ էր կոխել, խոսքը ականջը չէր մտնում, նա էլի մեկ բերան՝ «Հանի՛ր դանակն» էր ասում։

Վերջը վերջը ես էլ վերկացա ու՝ «Պապա, ասի, քեզ մեկ բան ասե՞մ, ասի։ Ես տեսնում եմ որ էսօր մահս եկել է, ինչ կուղես, ես պատրաստ եմ»։

«Մարտիրոս, կանչեց պապաս, երեք անգամ քեզ կասեմ՝ կհանե՞ս դանակը թե չէ՞»։

— Դանակը վերցրած չեմ, ասի։

«Դանակը կհանե՞ս թե չէ՞», ասավ երկրորդ անգամ։

— Դանակը մոտս չկա, ասի ես նորից։

«Վերջին անգամ եմ ասում քեզ, դանակը կհանե՞ս թե չէ՞»։

— Պապա, ոտքիդ պազնեմ, դանակը չեմ վերցրել, ասի ու պապայիս ոտքերն ընկա։

«Բերե՛ք ֆալախան», ասավ պապաս։

Հայտնի երևում էր որ մարդու խելքը արդեն վըրան չէր։

— Վայ մամա, կանչեցի, վրկիր որդուդ, ինձ պետք է մեղնեն էսօր։

Երնեկ թե դորթ մեռցրած լինեին։

Ֆալախան վաղուց պատրաստ էր, երկու ճիպոտ էլ հետը։

Երեք հատ ուժեղ տղաներ վրաս թափվեցին, ինչպես որ դասաբը կովին, էնպես էլ նրանք ինձ վայր գլորեցին, կոշիկներս, փաթթոցներս ոտքիցս հանեցին, ֆալախային պարանը ոտքիս ձիգ ոլորեցին ու էնպես բռնած պահեցին, մեկ ճիպոտը պապաս առավ, մեկելք վարպետս... էլ միտքս չե...

Երեք օրից որ ուշքի եմ զալիս, տեսնում եմ որ անկողնիս մեջ պառկած եմ, մամաս ու մեծաս, մեկը մեկ կողմու, մեկելք մեկել կողմու, աչքերը ուռած, կեցել են, երեսս են նայում: Տեղիցս շարժվել չեմ կարողանում, ամեն ժաժ եկածիս՝ կարծես հազար թիզ են խրում ողջ մարմինս: Ոտք ունեցածս չեմ հասկանում, կարծես կտրել են, դեն են գցել: Կամաց-կամաց աչքս վրաս եմ հավաքում ու անցած բաները մեկ-մեկ, մեկ-մեկ միտքս է զալիս:

Մեկ էլ տեսնես մյուս սենյակից սասանական մի ձայն է զալիս. չղիտեմ մարդու է, չղիտեմ՝ զազանի, ու շղթայի զնդդնդոց:

«Իս ի՞նչ է, էս», հարցնում եմ մամայիս:

— Սուս, ասում է, պապադ է, ասում է:

Խեղճ պապաս, խելքը կորցրել էր ու կատաղեց էր:

Յոթն ամիս տեղաշորերից չեմ վեր կացել, հինգ ամիս էլ էնպես տկար եմ լինում, որ պատերից քըսքըսվելով կամ նստարանները բռնելով զոռով-զոռով ման եմ զալիս սենյակի մեջ: Ետ միջոցին պապաս էլ մեռնում է— աստված գերեզմանը լույս իջեցնի—երեք հոգի՝ ես, մամաս ու մեծաս մնում ենք որբ ու մեկ կտոր սև հացի կարոտ: Մամաս լուսե լուս ժողովրդի կարն է կարում, մեծաս էլ գալալություն անելով, փարանալով, մոմ թափելով, չար-աչք աղոթելով՝ կտոր մտոր փող են վաստակում. դրանով շտե դլուխներս ապրեցնում ենք:

Քաղաքի մեջ անունս դանակի գող է դուրս զալիս:

Ես էլ տասն և չորս տարիս եմ մտնում:

Էտհենց միջոցին աղա Լազարովից էստեղի մեկ ա-

շայի վրա գեր է զալիս թե՝ «եթե մեկ էնպիսի գրել-
կարդալուն սեր ունեցող աղքատ տղա կա էտեղ,
չնորեմ վերցնես ուղարկես Մոսկով հայի ճեմարան»։
Էս որ լսում եմ՝ խոկոյն զնում եմ էտ աղայի մոտ,
ուներն եմ ընկնում, «Արի էտ լավությունը արա՛
ինձ, ասում եմ, համ որբ եմ, համ աղքատ եմ, համ
էլ կարդալու սեր ունեմ»— ասում եմ շոե՝ ինչ որ բե-
րանս գալիս է։ Նա էլ— աստված բանը աջողե—խոսք
է տալիս. «Երկու շաբաթից պատրաստ եղիր, ասում է,
զնացող որ լինի, հետը կղնեմ կուղարկեմ»։ Զեռքը
պաշում եմ, դուրս եմ զնում, ուրախությունից վեր
վեր եմ թռչկոսում, բայց մերոնց բան չեմ ասում։ Ե-
րեք չորս օրից մի քաղաքային պահապան է զալիս
մեր դուռը ծեծում։ «Մարտիրոս անունով էսպես էս-
պես տղա կա՞ էտեղ», ասում է։— Ես եմ, ասում եմ։
«Հայդա, արի հետո, աղան քեզ կանչում է», ասում է։
Մամաս կարծում է թե էլի ով գիտի ինչ փորձանք պի-
տի դա գլխիս, խեղճը քիչ է մնում խելքից դրկվի։
«Մի վախենար, մամաս, ասում եմ, ու մի երկու խոս-
քով ասում եմ բանի եղելությունը»— Որ էտպես է,
աստվածամայրը բախտղ բանա, բալաս, ասում է ու
ճամփա է զցում։ մեծաս էլ շտապով փալն է առնում,
որ առաջուց իմանա թե ի՞նչ համբավ պիտի բերեմ։
Գնում ենք աղայի մոտ։ մարդու խոժոռացած երեսից
հոսկանում եմ, որ ասելուն ուրախ բան չպիտի լինի։

— Հածե՛, ասում է, դու ի՞նչ երեսով էիր ուղում
կազարովի վարժարանը մտնել։ Մեկ-երկու դանակ էլ
որ էնտեղ զողանաս, էտ հու բոլորովին կկեղտոտես
նախիջեանցու մաքուր անունը, ասում է՝ երբ որ պոչդ-
էտքան կեղտոտած էր, դու ի՞նչով համարձակվեցիր
զալ ու խնդրվել ինձ։ Դե՛հ աչքիցս կորիր, դող-ավա-
զակ, երեսդ չտեսնեմ...

Էսպես իր տնից դուրս կանի մեր աղան։


Լալով-լալով տուն եկա։ Խեղճ մամաս, աչքը դուռ-
նը պահելիս է եղել, թե որդին ի՞նչ ուրախ բաներ պի-
տի իրեն բերի ու ծերությունը մխիթարի։ մեծայիս

փայն էլ դուքս է եկել շուտով ճամփա, շատ փող, ազուհաց ու տեսակ տեսակ բարություններ։ Էս որ լսեցին ողորմելի կինամարդիկը, ավելի մեծ տրամության մեջ ընկան։

Մեկ օր մեծայիս մեկ տուն թեթև թափելու^{*)} ճայն տվին։ Էտ տան տերը տարվա մեջ ինը ամիս Ստավրոպուք էր կենում իր առուտուրի պատճառով, տասներկու տարեկան որդուն էլ հետը առել էր ու էնտեղի թագավորական վարժատունն էր տվել կարդալու։ Մեծաս վարժատրանի անունը որ լսում է, կինամարդոց ոտքերն է ընկնում թե էսպես էսպես, մի թոռ ունեմ, ասում է, կարդալու շատ սեր ունի, ինքը պստիկ է, բայց մեծ մորուքով տերտերից, վարդապետից ավելի բան դիտի, զովում է մի խոսքով ինձ, էնքան է ասում, էնքան է աղաչում, պաղատում, որ էտ կինամարդկանցից խոսք է առնում, որ ինձ էլ Ստավրոպուլ դրկեն։ Մատթեոս աղայի մոտ, որ նա էլ վարժատուն տա։ Էս որ սարքում է պրծնում, շտապով տուն է զալիս, «Աչքդ լույս, Մարտիրոս, ասում է, չարը խախանեցավ, բարին կատարեցավ», ու մեկիկ-մեկիկ պատմում է ինձ, ինչ որ խոսվել էր իմ մասին։ Ամենքը էլ ուրախանում ենք։

Բայց օրեր են անցնում՝ բան չկա, շաբաթ է անցնում՝ բան չկա, վերջը վերջը ամիս է անցնում, էլի բան չկա։ Մեկ օր մեծաս վեր է կենում ասում է. «Էս ի՞նչ զարմանք բան է էս, ասում է, էսքան ժամանակ մեկ խարար չի լսվում, ասում է, մոռացել են թե՝ խորեցին մեզ, ասում է. էսպիսով բան դուրս չի դալ, մեր կենամ մեկ ինքո դնամ իմանամ։ ծանդը կեցած քորի տակից ջուր չի վազիլ» ասում է՝ ու Փարաջան հողնում է, դլիսին թաշկինակ է վաթաթում, փայոր ձեռքն է առնում, տըպտըպալով ուղիղ դեպի Մատթե-

*) Հիմանդություն կամ թուլություն ունեցողի հին շորի մեջ կիայցալ մոմ են բերում եկեղեցուց, հիմանդի գլխի տակն են զնում. մյուս օրը ամանի մեջ հայեցնում են և հետո թափում ջրով լոված պնակի մեջ՝ երեր անդամ դլիսի վրա բռնած, երեր անդամ սրտի, երկու անդամ ծնկերի և մեկ անդամ ոտների վրա։ Իրը թե սրանով հիմանզը ըժշկում է։ Ծ.Թ.



ոս աղայի նշանածն է զնում։ Իրիկնաղեմին ճրագ վառելու ժամանակները ոտները թրեւելով, ուրախ երեսով ետ է զալիս։

«Ինչ մաղարիչ ես տալու», ասում է ինձ։

— Առաջին տարվա ոռնիկո ամբողջովին քեզ Երուսաղեմի ճամփի մոռղ, ասում եմ։

«Ե՞յ, բալաս, ասում է մեծաս, էն օրը ոք դա, ով դիտի՝ ոսկորներս էլ փթած կլինեն։ Ավելի լավ է, էզուցված բանը տեսնենք։ Ահա քեզ ուրախ խարար։ Վաղը չէ մեկել օր Մատթեոս աղային էստեղից երեք սայլ բաղկալի ապրանք պիտի ղրկեն։ Եթե չես վախենում — որովհետև էն ժամանակները ավաղակ չերքեզներից վախ կար — նստի՛ր և զնա՛. մնացածն էլ աստված դիտի»։

Ինչպես որ ասում է, էնուես էլ անում ենք։ Մեծաս դոնեղուո է ման զալիս, մեկից հին մուշտակ է ինդրում, մյուսից տաք մեսթ*) է մուրում, մեկ ուրիշից էլ մորթե գղակ է տոնում. փաթաթվում եմ, կտղկալվում եմ, մեկ պստիկ բոխչա՝ ինչ ասես շորերով, ճամփի պաշարով կոանս տակն եմ դնում, դնում եմ սայլն եմ նստում ու ճամփա ընկնում։

Ինն օրից Ստավրոպոլ ենք հասնում։ Գնում եմ էտ Մատթեոս-աղայի մոտ, գլխիս եկած ամեն բանը պատմում եմ, որ ասես մեկ բան եմ թարցրնում՝ լավս էլ եմ ասում, վատս էլ ասում։ Բայց տեսնում եմ որ մարդու երեսը մեկ տեսակ է լինում, երեսում է որ պատմածիս չի հովանում, կարծես դժմարանում է, բայց — էլի շեն կենտ—բան չի ասում։

Մեկել օրը ինձ վերցնում է, տանում է մեծավորի ժողով և խնդրվում է որ վարժատուն առնի։

«Գլխաղիր ունե՞ս», հարցնում է ինձ մեծավորը։ Հանում եմ ծոցից. իրան եմ տալիս։

«Տասն և չորս տարեկա՞ն ես», հարցնում է։

*.) Փափուկ կաշվե (սափյանե) դուլպա, Ծ. Թ.

— Հա՛, ասում եմ:

«Թուսերեն գիտե՞ս», ասում է:

— Զէ՛, սովորած չեմ, ասում եմ:

«Թվաբանություն գիտե՞ս», ասում է:

— Զէ՛, սովորած չեմ, ասում եմ:

Էլի մի քանի չսովորած բաներս է հարցնում: Ջրը հասկանում եմ, ո՛րը չէ: Մեծավորը քիթուպունդը յած է թողնում: Մատթեոս-աղան կարմրում է:

«Օրենքով վարժատուն առնել չէր կարելի քեզ, բայց ասում է, Մատթեյ կարպիչին խաթեր համար կամաւակամա պետք է հարգեմ, ասում է մեծավորը, բայց ամենաստորին դասարանը պետք է քեզ նստեցնեմ», ասում է:

Ուրախությունից չգիտեմ՝ ինչ անեմ. մեր աղաթով գնում եմ մածավորի ձեռքն եմ պաշում. մաքրուն դուք է զալիս:

«Վրայից երեսմ է որ մաքուր սրտով տղա է, բնավորությունն էլ դեռ փչացած չէ», ասում է Մատթեոս-աղային, վրաս աչքով նշան անելով: «Կաշխատե՞ս, լավ կտվորե՞ս», հարցնում է ինձ:

— Սովորելու որ չենի, ինչո՞ւ վայրի դաշտերը կընկնեի, կդայի էստեղ, ասում եմ:

Ծիծաղեց մարդը. մի քիչ էլ մնացինք ու վեր կացանք տուն եկանք:

Ճամփիին Մատթեոս աղան դառնում է ինձ և ասում.

«Հածե՛, գլուխդ գովում էիր թե շատ բան գիտես, տեղն որ եկավ ինչո՞ւ պոչդ քաշեցիր, ինձ էլ ամոթով թողիր»:

Ես բան չասի, սուս կեցա: Ախալեր, ի՞նչ ասեի. իմ տարիներով սովորածս էստեղ բանի պետք չեկավ, գըրանց սովորեցրածն էլ ես սովորած չէի: Տեսա որ Մատթեոս-աղան առաջին օրից վաս աչքով նայեց ինձ, բայց բան չասավ, էն էլ չնորհակալ եմ:

Մեկել օրը սոսվույան վաղ գնացի վարժատում, մինչև կեսօր մնացի. երկու վարժապետ եկան, երկուսն էլ դաս տվին. կեսօրից հետո մեկ էլ գնացի, էլի

երկու ուրիշ վարժապետ եկան, նրանք էլ դասեր տը-
վին: Մյուս օրը բացի նրանցից, էլի չորս ուրիշ վար-
ժապետներ եկան, ամենքն էլ ուրիշ-ուրիշ դասեր տը-
վին, զնացին: Գիրք չունեի, ի՞նչ անեի, ո՞ւմն ասեի,
ո՞ւմից աղաչեի առնեի: Եթե Մատթեոս աղային ասեի
թե ինձ ութը գիրք է պետք, հազիվ թե առներ տաք,
որովհետև վրայից երևում էր, որ ինձ տաք աչքով
չէր նայում, էնքան էր որ մեկ փոր հաց խնա-
յելու քաշվում էր: Նրա որդուց ուղեի^ո, էն էլ գիտեմ
որ խոսքս զուր պիտի անցներ, քանի որ նա առանց իմ
ասելուն էլ գիտեր գիրք չունեցածո, բայց մեկ բերան
խոսք չասավ թե՝ ինչի վրա դասերդ պիտի սովորես.
Երևում էր որ նրան էլ զուր չէր գալիս վարժատուն
մտածու:

Դասատան մեջ մի քանի բարի երեսով տղաներ
նկատել էի, հարցնելով-հարցնելով զնացի գտա նրանց
տունը, ամենքից էլ մեկ-մեկ կամ երկու-երկու գիրք
վերցրի, եկա տուն, քաշվեցի մի անկյուն և սկսեցի
ինձ ու ինձ սովորել: Միտքս, փառք աստծու, սուր
էր. էտ կողմից միամիտ էի. դասերս էլ որը վեց տող
էր, որը ութը տող— էտ ինձ համար մի բան չէր.
Թվարանության վարժապետը ոչինչ տված չէր, նրա-
նը՝ սե տախտակի վրա տեսակ-տեսակ հաշիվներ էին,
էտ ոչինչ. դեռ դասարանից դուրս չեկած գիտեի:

Մեկել օրը, երբ վարժատուն զնացի և հերթը ինձ
հասավ, դասերս էնպես լավ պատասխանեցի, որ վար-
ժապետներս զարմացած մնացին, իրենց ձեռքի թղթի
մեջ անունս ու ազգանունս դրեցին և գովեցին— էտ
թղթի անունը մեկ տեսակ էր, բայց վաղուցվա բան
է, մոռացել եմ՝ զնացել է:— Մեծավորը եկավ, էտ
թուղթը աչքի անցրեց, «Մալադեց Արվաճիով, ասավ,
աշխատիր, ասավ, մեկ օր մարդ կլինես», ասավ:

Երեսից երևում էր որ լավ մարդ էր: Ախտեր,
ժողովուրդը ինչ կուղե թող ասի, բայց էտ կաղակ աղ-
գը հարբան է, ինչ է, ինչ չէ, էլի սիրոր մաքուր է,

մեղ պես նախանձոտ, չարկամ, բամբասող, մարդու
միսը ուտող չէ'...

Էսպիսով կես տարի մնացի եկա վարժատուն։
Պարծանք չլինի ասածո, օրեցօր ավելի ու ավելի լավ
էի սովորում և վարժապետներիս ու մեծավորիս աչքն
էի մտնում. կազակ ընկերներս ինձ սիրում էին, շեն
կենան, զիբք, տետրակ, թուղթ, զրիչ, քարե-
գրիչ, ինչ որ պետք էր, ամեն բան տալիս էին, և էլ
որին դասն էի սովորեցնում, որին էլ ձեռքիցս եկած
պստիկ մստիկ լավություններ էին անում, մեկ խոսքով
եղբայր եղբոր պես էինք ապրում։ Բայց Մատթեոս-ա-
ղայի որդին հետո լավ չէր. վրաս նայել չէր ուզում,
ամաչում էր հետո խոսել, խաղալ կամ դաս սովորել,
ամեն օրատահողին ասում էր թե՝ ևս վատ աղջից,
չքավոր, ոամիկ տղա եմ... պապան էլ էսօր էղուց
տնից վախցնել է ուզում, էնքան է որ՝ մեկ պատճառի
է ման դալիս։

Ասում էր, բայց նրա խոսքը բանի տեղ դնող ը-
լար։

Ամառ եկավ, քննությունները սկսվեցին։ Ինձ ա-
ռաջին դասարանից երկրորդը տարսն— ընդամենը կես
տարի մնացի առաջին դասարանում,— լավ սովորելու
ու գովելի բարքիս համար անունս կարմիր տախտակի
վրա գրեցին, մեկ հատ էլ զիբք բախչեցին։

Մեկել տարին դասատան մեջ էն առաջին աշակեր-
տըն էի հիշվում, էտպես էլ մնացի մինչև զուրս գալս.
Դասատուն դասատան ետեից, դասատուն դասատան ե-
տեից փոխեցի ու Մտավրոպոլ գալուս երրորդ տարին
արդեն չորրորդ դասատանն էի։

Դեռ նոր էի չորրորդ դասատունը անցել, որ գրի-
խիս նորից փորձանք եկավ։

Մեկ օր Մատթեոս աղան տոնավաճառից ուշ տուն
է գալիս, հանվում է, ծոցի փողը— իրեն ասելով—
քսակով սեղանի մրա է դնում, ծրագր հանդցնում է
սլառկում։ Մյուս օրը որ անկողնից վեր է կենում,
քսակը պտրտում է— քսակը չկա։ Խանութի տղաների-

ցըն էլ մեկն էլ չկար, ամենքն էլ տոնավաճառն էին. ծառա էլ չունեինք — նոր դուրս էր զնացել — տանը ես էի, ինքն էր և որդին էր. երեքիցս մեկն ու մեկը զողացած պիտի լիներ, բայց ո՞վ. ակներե չէ՞. կասկածը իոկույն ինձ վրա է ընկնում. էտ զանակի բանն էլ նորից աշխարհ է զալիս: Ես երդում-պատռու եմ լինում, երկնքի ամեն սուրբերի անունն եմ տալիս, ոկա եմ բերում, — բոլորն էլ զուր է: Մատթեոս աղան հրամայում է որ շուտով արուռ-չուրուռս հավաքեմ, վեր կենամ Նախիջևան գնամ: Լաց լինելով զնում եմ մեծավորիս մոտ, էսպես էսպես բան է, ասում եմ: Նա էլ ի՞նչ անի խեղճը: «Ժա՛լքը, ժա՛լքը, (ակսո՞ս) ... Նորից նստում եմ սայլը, զալիս եմ Նախիջևան:

Մամաս որ իմանում է էս նոր անբախտությունս, թուլանում ընկնում է. քացախով, ջրով, նաշադրով զուով ուշքի են բերում ողորմելի կինամարդուն: Մեծաս վալ է բաց անում ու ասում է. «Փողը անպատճառ պիտի զանվի ու անմեղությունս լույս պիտի դա. ինձ էլ նորից ձայն պիտի տան Մտավըսովլ»:

Էս անդամ մեծայիս վալը զորթ է զուրս զալիս, բայց միայն կեսը. էտ կորած քսակը Մատթեոս-աղայի վարտիկի, զրպանից է զուրս զալիս: Սիրոս շահելու համար նշանածին նամակով ապսպրում է, որ ինձ երկու ֆունտ չամիչ, երկու ֆունտ խուրմա, քսան կոմեկ էլ սև վող տան ձեռիս ու ճամփեն: Ինչպես է լինում որ մեծաս նրանց տունն է զնում. էտ նամակը տոջեր կտրդում են, չամիչն ու խուրման թղթի մեջ են փաթաթում, ձեռքը տալիս, փողն էլ ծոցն են զնում:

«Մեծա, ասում եմ, ի՞նչու առիր, ասում եմ, էտ մեկ է թե իմ անմեղությունս ծախածի պես բան եղավ», ասում եմ:

— Որ չառնեի, ասում է մեծաս, անմեղությունը բոլորովին ձրի տված պիտի լինեիր հո, ասում է:

Լավ որ միտք անես, մեծայիս ասածը զորթ էր, բայց միայն հայերիս մեջ: Դանակի բիծը կար հո վը-ըստ, քսակով փողինն էլ որ կպավ, բոլորովին արա-

տավորվեցի, էլ երես չունեի քաղաքի մեջ մնալու, շուտով մի հնար պիտի գտնվեր Նախիջևանից ելնելու, բայց ո՞րտեղ երթայի, ով իր տանը կառներ ակներե երկու զողությունների մեջ բռնված տղին...

Մեր ազդը ի, բնե էտպես է. վատ բան լսելու երկու սուր ականջ ունի, լավ բանի համար ոչ մեկը: Քսակով փող գողացածս ամենքն էլ լսել էին, բայց քսակի Մատթեոս աղայի վարտիկի գրպանից ելածը՝ մեկ մարդ էլ լսած չէր: Ի՞նչպես ախր չտրաքին...

Մեկ օր տան դռնակի առջե կանգնած եմ ինձ համար, նայում եմ՝ առջեիցս մի կաղակ է անցնում, գտակը հանում է և գլուխ է տալիս. «Ես ինչ մարդու տունը ո՞րն է», հարցնում է:

— «Խսպես էսպես զնա՛, կպտնես», ասում եմ. Հետո իրեն եմ դառնում և հարցնում. «Դու ո՞վ ես»:

— Ես նրա հովիվն եմ, ասում է:

«Ո՞րտեղից ես գալիս», ասում եմ:

— Սև ծովի ափերից, ասում է:

«Զիվ-սայլդ ապա ո՞րտեղ է», ասում եմ:

— Զի-սայլ չունեմ, ասում է, ոտքով եկել եմ, ասում է:

Իսկույն միտքս բան է ընկնում: Մարդը զնում է:

Մյուս օրը մերոնց բան չեմ ասում, կամացուկ տնից զուրս եմ գալիս, ուղղակի զնում, ոաստ եկողին հարցնելով, ճիշտ երկու շարաթից ոտքս Եկատերինադար եմ զնում. Ես հային եմ զնում, էն հային եմ գրնում, վերջը վերջը մեկին զանում եմ, տարին երեսուն և հինգ ոտրլի վարձով,— էն ժամանակները փողը դեռ ասիզնացիայով (թղթաղբամով) կհամարեին,— խանութի աշակերտ եմ մտնում: Որտեղ սովորածս, ինչ գիտեցածս, ում որդին եղածս ոչ մեկին էլ չեմ ասում, — ճշմարտությունը առելու համար մեկ անգամ տոել էի:

Վեց տարի մնացի տիրոջս խանութում. էտ միջոցում մեկ անգամ թարս խոսք ասել չտվի, մեկ օր հաշվիս մեջ մի զոռշ պակաս չեկավ,— հարյուրներ հո ա-

վելք էր ձեռքիցս անցնում — էն ոչինչ։ Խանութպանը էնքան վստահացել, հավատացել էր ինձ, որ ամիսներով ոտքը խանութը չէր դնում... Եղած չեղածը մի տասնըերեք-տասնըչորս տարեկան աղջիկ ուներ, տեղն եկած ժամանակ միշտ ասելիս է եղել մոտիկ մարդկանց — «Կատինիս թող տարիքը լրանա, կառնեմ Մարտիրոսին կտամ, խանութս էլ նրա վրա կդրեմ, դրանից հետո հայրությունը պես բան կլինենք»։ Լուղներն էլ իսկույն լուրը ինձ կրերեին։ Ես էլ հույսով կեցել եմ թե էսօր չէ վաղը քառասուն հազարանոց խանութի տեր պիտի լինեմ։ Վարձս էլ չեմ առնում, թե ինչ է՝ երբ էլ որ լինի՝ ամենն էլ իմն է...»

Դու մեկ նայի թե դեռ գլուխս ի՞նչեր կան գալու...»

Տերս վաղուց Նախիջևան գնացած չէր։ Մեկ օր էլ վեր է կնում և ասում ինձ. «Հածե, գիտե՞ս ինչ, ասում է, սիրոս մեկ Նախիջևան գնալ է ուզում, ասում է. ի՞նչ ես ասում», ասում է։ Ես բան չասի, բայց սիրոս շրջարավ։ «Իտ ամենը իմ հարյուր հիսուն ուռուրու բան չէ՞ր, ասում է տերս, թքել եմ վրան, հայդե արի երթամ...» Ետ որ գամ, աստուծով, նշանդ էլ կղնենք, աղջիկս էս էս է տասնըհինգ տարեկան կլինի-եկող տարի էս ժամանակները պսակներդ էլ կհամբուրեմ ու՝ մազս էլ ողատից կկախիեմ... Հերիք է ինչքան չարչարվեցի, հանդստանալու ժամանակն է, մի քիչ էլ դոմ տանջվի՛ր...»

Կուզեի ասել՝ «մի դնա»։ տեղով էլ գիտեի որ խոսքս կլսեր, բայց չասի. «Ինչ լինելու է՞ թող լինի», ասի, մտքիս մեջ... Ինչ ես կարծում, հողուս դդացածը հո զուր չեղավ...»

Էտ իմ տերս որ Նախիջևանից ետ դարձավ, էլ առաջիւ մարդը չէր, բոլորովին վիոխվել էր. մեջր սառնություն մտել էր։ Առավտավանից մինչև երեկոն կդար խանութում կմնար, ամեն բոլե մատյանս աչքը կանցներ, դախլի մանր փողը կհամարեր, չթի ու ապրանքի թոփերը կհամարեր, երբեմն էլ թոփերը չա-

վել կտար։ Շուտ հասկացաքամու որտեղից վշացածը, բայց սուս կեցա. տեսնեմ՝ դրա վերջը ինչ կլինի, ասի մտքիս մեջ։

Անցնում է էսպես շարաթ, շարաթ ու կես... Մեկ օր տեսնեմ, տերս մի ամուրի նախիջևանցի տղա է բերում խանութ ու խանութի բարին ամենը նրան հաշվով է տալիս, ինձ էլ նրա ձեռքի տակ է դնում։ Էլի, սուս կեցա, տեսնեմ սրա վերջն էլ ինչ կլինի, ասում եմ մտքիս մեջ։ Մեկ էլ ի՞նչ լսեմ. տերս էտ նոր մըտած խանութի տղին խոսք է տվել իր աղջեկը նրա հետ նշանելու... Էտ էլ կուլ տվինք։

Երբեմն մտքիցս կանցնի թե կենդանիների մեջ ո՞ր ավելի է չարքաշը, դիմացկունը. մի ասիլ որ աղամորդուց ավելի դիմացկունը չի եղել։ Ուրիշ անդամն էլ էսպես միտք եմ անում՝ երանի, ասում եմ, մարդկանցից էլ էն ամենադիմացկունը հայը չէ։ Խոսքի վրա, իմ տեղու մի ուրիշ ազգի մարդ, ոռու, նողա ֆրանցուլ, գերմանացի, որ լիներ, գլուխս ծուած, էտքան մարդոց վատությունին, թշնամությունին կղիմանա՞ր, թե՝ «թքել եմ վրաներդ» կասեր ու գլխի ճարր կտեսներ, խելքի կտրածի պես։ Ասողներ կան— զուցե գրքի մեջ էլ գրած է, ով գիտի— ասողներ կան որ ինքն իրեն մեռցնելը հոգուն մեղք բան է, դրա համար, ասում են, աստված մեր հողին դժոխք է տանում։ Որ էտպես է, ապա ինչո՞ւ մարդու անբախտ է, ուղում եմ ասել թե՝ էտ հրաման տվողը ի՞նչի բանը էն տեղն է հասցնում, որ ողորմելի մարդը աշխարհիս վրա ապրելը մեռնելուց վատ է ճանաչում ու—մեղա աստծու, մեղա— կամ զեղ կիսմի, կամ պարանը վղին կղցի, կամ ջուրը կընկնի, կամ ճակատին զնդակ կտա... Զգիտեմ, ախպեր, խելքիս բանը չէ։

Մեկ օր խանութում նստել եմ, վիզու ճուկ։ Միտք եմ անում, գլխիս անցած բաները շարան-շարան աչքիս առջեկց կանցնեն ու ինքս ինձ կհարցնեմ՝ արդյոք անբախտությունս վերջացա՞վ։ Մեկ էլ գլուխս բորձ-

բացնեմ ի՞նչ տեսնեմ. տերս դիմացս կանգնել է, վրաս
է նայում.

«Հածե Մարտիրոս», ասում է:

— Համմե, աղա, ասում եմ:

«Գիտեսմ մեկ բան ունեմ քեզ ասելու», ասում է:

— Ի՞նչ է ասելու, կասեմ:

«Ես քեզ ճամփա դնել եմ ուղում», ասում է:

Սարսափս կդա:

— Ի՞նչու, ասում եմ:

— Սիրսս շտե էնպես կուղի, ասում է. Էս խանու-
թի տերը ե՞ս չեմ»...

— Պատճառը, ասում եմ:

Երեսը դարձնում է նոր եկած խանութի տղին ու
ասում է— իսկ խոսքը ինձ է, գի՞տես.


«Մեկ էս լիրք անամոթին տե՛ս, երեսը կաշի արել
է ու ինձնից պատճառներ կուղի իմանալ, ամեն տեղից
հարած-վարածը մոռացել է, դեռ կարող է ուղիղ աշ-
քիս մեջ նայել»:

Հետո դառնում է ինձ և ասում.

«Դու պատճառ կուղես իմանալ, հա՞ . պատճառը
էս է— դու զող ես»:

— Ե՞րբ զողությունս բռնել ես, ասի:

«Մենակ ես բռնած չեմ քո զողությունդ, հազար
մարդ բռնել է: Դո՞ւ չէիր վարպետիցդ դանակ զողա-
ցողը, դրա՞ համար չէր որ քեզ վարպետիդ մոտից
փախ տվին, քո՞ պատճառով չէր որ պապադ խեցավ,
հետո էլ մեռավ ողորմելին: Աղա Լազարովի ուսում-
նարանից քեզ զուրս չարի՞ն: Ստավրոպոլ Մատթեոս ա-
ղայի քսակով փողը դո՞ւ չէիր զողացողը. Դրա համար
քեզ թաղավորական վարժատանից չվոնդեցի՞ն, անտ-
մոթ շուն... Մեղքդ որ գիտես, զոնե շան պես պոչդ
քեզ քաշիր, է՞... Էս խարերային նայիր, պատճառ
կուղի՞ իմանալ: Անամոթ երեսիդ թքեմ— այ քեզ
պատճառ. զող ես, շտե, զո՞ղ ես: Ես խանութիս մեջ
զող մարդ ունենալ չեմ ուղում, հասկացա՞ր, զլուխդ
մտա՞վ: Շտե քեզ պատճառ»:



— Հավ, ասի, տուր վեց ու կես տարվա վարձու, երթամ:

«Ի՞նչ վարձ, ի՞նչ բան, ի՞նչ փստան... Բ՞այ ես հիմարացնում: Քեզ պես աշկարա գողը իր վարձը վարդուց առած կլինի, գուցե ավելով էլ... Շուտով ել խանութիցս, թե չէ ոստիկաններով կհանեմ ու ձեռքդուքդ շղթայակաս անել կտամ, էնպես ոտքով կուղարկեմ Նախիջևան: Էս օտար քաղաք է, զու Նախիջևան չգիտենաս, էստեղ մենք զգույշ պիտի կենանք, թե չէ մեկ որ հայերիս անունը կոտրվի, մեկել ուղղելու դուռը չկա. Դրա համար շտե չեմ ուզում դիմիդ աղմուկ բանալ... Դե հայդե՛, որտեղից եկել ես, էլի էնտեղ գնա՛:

— Աղա, ասի, առանց փողի ի՞նչպես երթամ, ո՞վ ինձ կտանի: Ճամփին ախր ուտել խմել պետք է, ո՞վ ինձ ձրի հաց, ջուր, պառկելու տեղ կտա: Մեկել որ Նախիջևան զնացել եմ, գիտե՞ս հո, — զանակ ու քսակ զողանալս քեզ ասողը էտ էլ երևի ասած կլինի—էնտեղ ծեր մայր ու մեծ մամա ունեմ, ի՞նչ ասեմ՝ երթամ, նրանց ծերության նեցուկ լինելու տեղ՝ զլուխներին ծանրություն երթա՞մ... Աղա, ոտքդ պաշեմ, մի անի էտ վատությունը, տնիցդ փախ մի տա, ինձ մի խայտառակի: Վեց տարվա երախտիքս ի՞նչու մոռացար, ի՞նչու մոռացար որ սրանից երկու ամիս առաջ...»

Էլ չկարողացար բան ասել, արցունքս հայհայ խեղ դոմ էր...

Տերս քսակը բացեց, միջից տասը հատ թուղթ փող հանեց, առջևս շպրտեց ու ասավ.

— Էս քեզ չէ, ծեր մորդ, մեծայիդ է: Քեզ էն էլ կլինի, ինչ որ վրայի շորիդ ու ժիլետիդ աստառի մեջ կարել ես թաքցրել»:

Առի հիսուն ոռւրին, պաչեցի տիրոջ ձեռքը և ելա խանութից: Իսկույն բազար զնացի, վրայիս մահուղեց շորը ծախեցի, տեղը ոռւս մուժիկի կոշտ շորը առա, հաղա և ոտքով եկա Նախիջևան: Մեծաս մեռել էր, մամա էլ իրեն ծեր տեղով մեկի մյուսի լիացքն անե-

զով օրն էր անցկացնում, էսօր կես կուշտ, վաղը քաղցած:

Նախիջեան որ եկա, քսան և երեքիս մեջն էի, ձիշտ էն տարիքս էր, երբ մարդ դեռ նոր աշխարհ է մտնում և աշխատանքի համն է տեսնում: Բայց դու արի տես որ էս ծաղիկ տարիքիս մեջ աշխարհքիս բանից պըճել ձեռք էի վերցրել ու կյանքիս թույնը պիտի ուտեի ու լեղին խմեի... Այս, աշխարհք, աշխարհք:

Լավ է որ էս վեց ու կես տարվա մեջ երեսս էլ մոխվել էր, էն դանակի ու քսակի պատմությունն էլ մոռացվել էր: Իմ ուղածս էլ էտ էր:

Մեկ օր բազար ելա, մի հատ աժանագին ձի առա, հետո պատահմամբ մի տակառասայլ և ձիու սարք առա և էն օրից ի վեր մինչև էսօր—ձիշտ քառասուն և երկու տարի է— ջրկիրություն եմ անում»:

Մի քիչ հետո Մարտիրոսը ասավ.

«Աղա, մոտղ մանր փող չունե՞ս, հինգ տակառ շուր եմ բերել, մի մանեթ կանի... Զիուս համար մի քիչ խոտ ու գարի պիտի առնեմ, հայվանս երեկվանից ի վեր քաղցած է, տանն էլ խեղճերը քանի ժամանակ է ինձ են սպասում, մի մի կտոր հաց նրանց էլ պիտի տրվի:

— Ահա քեզ քսան մանեթ,—ասի ու ձեռքը կուզեի երկու տասանոց դնել,— մեկ մանեթը Ջրիդ համար, տասնըինն էլ պատմածիդ համար:

«Ի՞նչ ես անում,— ասավ Մարտիրոսը,— վարձս ինչ որ է՝ էն տո՛ւր. Դրա համար էլ չնորհակալ կիւնեմ: Վացունըհինգս լրանում է, աղքատությունից աչք բացած չեմ, բայց էլի մարդու ձեռքս մեկնած չեմ. սրանից հետո չէ թե ամոթ, հոգուս մեղք էլ է մուրալ: Էսօրվա օրս ջրկիր եմ, բայց—սրանից էլ ստոր դեռ ի՞նչ պարապմունք կա—էլի մտքիցս դուրս չի դաշիս որ մեկ օր ազնվական տղաների հետ կողքե կողք նստել եմ ու լավ լավ մարդկանցից բան սովորել եմ... Վաղուց է մոռացել էի, էս դանակի պատմությունը,

կարծում էի թե սրտիս վերքը արդեն փակվել էր՝
բայց էսօր հիսուն ու հինգ տարվա կորուստու որ զտա՛
նորից արյունը սկսեց կաթելու... Հե՛յ ժամանակ,
ո՞ւմ մտքից կանցներ որ էս ժանդոտած դանակը, որ
պոռշ չարժե, ժամանակով մի շենքով օջախ քանդել
է»...

— Մարտիրո՞ս ասի, քեզ մի բան հարցնեմ, զորթը
կասե՞ս, ասի:


«Մեկ տեսնենք ի՞նչ պիտի հարցնես, ասավ. թե որ
կարողանամ՝ կասեմ, ի՞նչու չէ»:

— Խոքան անբախտությունիդ մեջ ո՞ւմն ես ավե-
լի մեղավոր ճանաչում, ասի:

«Ես քեզ մի զորթ բան ասե՞մ, ասավ: Երբ որ զու-
ուղիղը կուղես իմանալ, ասավ, իմ անբախտությունիս
մեջ մեղավորը մենակ ե'ս եմ»:

— Ի՞նչպես, ասի, զարմանալով՝ ապա Մկրտիչ
վարպե՞տ, ապա Մատթեոս աղան, ապա խանութ-
պա՞նը...

«Ին ամենը դատարկ բան է, նրանք ոչ մի մեղք
չունեն, նրանք էն արին, ինչ որ խելքները կորեց, ևս
էլ էն պիտի անեի, ինչ որ իմ խելքն էր կորում: Ես
քեզ կարծ ասեմ: Աշխարհքո էսպես է: Ուզո՞ւմ ես որ
քեզ չկծեն՝ նախ ինքու ամենի վրա հաչի՛. ուզո՞ւմ ես
որ անունդ չուացնեն՝ ուստ եկողի անունը սեացըր՛ւ.
Էտ ամենը, ես վաղուց գիտեի՛... բայց մեջս մի բան
կար, էտ բանի անունը խղճմանք է: Շտե նա էր իմ
էն ամենավատ թշնամիս, նա էր իմ գլխին էս ամեն
վատությունը բերողը... Ախողեր, մեզ ո՞վ է ասել թե
դառը լինենք, որ դայլերը մեղ ուտեն»...



Խմբագիր՝ Հ. ՄԿՐՅՉՅԱՆ

Վ.Ֆ. 00372, պատ. 11. տիրած 5000
3,2 տպ. մ. Ստորագրված է տպ. 46 թ.

ՀՍՍՀ ԺԿՄ-ին կից Պռլիգը. և հրատ. Վարչ. № 1 տպ. Երևան, 1046

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029219

7862-

ԳԻՒԸ Յ Ա

